



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

ստանձնել և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կրիչով
մեղադրվել կամ օգտագործել առկա նյութը առեղծվելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5

7015

—
—

✓
ԳՈՒՐԳԵՆ ՀԱՅԿՈՒՆԻ

891.99

3

5

$\frac{F}{A} \frac{1}{915}$

ՊՕԷՍ



ՄՕՍԿՎԱ

$A \frac{\bar{I}}{915}$

$\frac{7}{210} A$

5

MOEY

1922

Արտատպութեան. իրաւունքը վերա-
պահումս է հեղինակին.

Տ Ի Տ Ա Ն

ԳԻՒՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆ

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Զ

Գնա՛ իմ Պօէմ,
Ման եկ ամեն տեղ,
Մտի՛ր ամեն տուն, ամեն մի անկիւն,
Ուր էլ որ լինի,
Ով էլ որ լինի
Ու տես ամենքին.

Ով որ իր հալաւ քրտինքն է թափում,
Ով որ իր եղբօր քրտինքն է լափում:

Գնա՛ իմ Պօէմ,
Գտի՛ր ամենքին:

Հնչի՛ր Դու նրանց հալա՛րտ, յաղթական.
Հնչի՛ր Դու ազատ...

Կերտել իմ ես Բեզ—

Դարսրի ծնունդ

Իմ ըմբոստ Հոգու, իմ փայլուն Մտքի,

Իմ իզօր Կամքի

Անմահ Տաղանդով:

Հնչի՛ր իմ Պօէմ,
Կերտել եմ ես Բեզ —
Դարերի ծնունդ
Իմ յաւէտ անջինջ, կարմրատառ քրտնող
Աննման Գրչիս
Սուրբ Աշխատանքով:

Հնչի՛ր իմ Պօէմ. —
Ծնել ես Դու իմ սուգ ու շիւանից,
Ծնել ես Դու իմ հասուն արգանդից,
Ծնել ես եւ Դու անառակ կեանքից —
Դարերով կերտած
Հսկա Բաղարում:

Գնա՛ իմ Պօէմ,
Ման եկ ամեն տեղ,
Մտի՛ր ամեն տուն, ամեն մի անկիւն,
Ինչ էլ որ լինի,
Ուր էլ որ լինի,
Ով էլ որ լինի. —

Գնա՛ Դու անվախ, հալարտ, յաղթական,
Գնա Դու ազա՛տ.

Գտի՛ր ամենքին,
Հնչի՛ր ամենքին.—

Բոլոր սէրերից իմ սէրն է սիրուն,
Բոլոր սէրերից իմ սէրն է հսկա,
Այս երգն է անմահ:

Գնա՛ իմ Պօէմ,
Անմա՛հ իմ Պօէմ:

Դիւթական Բաղա՛ք.

Երբ աշտարակից նայում եմ շորս կողմ՝

Անթարթ հայեացքով,

Հեռու եւ անծայր տարածութեան մէջ,

Իմ ոտքերի տակ,

Ու տեսնում եմ ես—

Պուրակ ու այգի, պարտէզների մէջ,

Դէպ անհուն ծառող, հորիզոններում,

Արարձանների, հազիւ նշմարող,

Քո նուրբ գծերը մշուշների մէջ—

Զգում եմ այնժամ,

Որ թոյլ, մարդկային աչքերով չափել

Օր առաւ ամող, լայնասփիւռ, անեզր

Քո մեծութիւնը,

Վիթխարի Բաղա՛ք,

Անզօր եմ, անզօր:

Վիթխարի Զադա՛ր.

Եւք տեսնում եմ ես

Մարմար ու զրանիտ հսկա սիւներով
Պալատ—արքունիք, դռնակ ու ամրոց
Փայլի մէջ կորած.

«Սրբութեան տաճար»—եկեղեցիներ
Վառ գմբէթներով, գոռոզ ու փքուն,
Ոսկու եւ ուժի ինկարկումներով.

«Գեղեցկութեան ընմ—թատրոնները՝ մե՛ծ,
Պալատների ցոփ, տոփալից սիրոյ
Եւ աշխարհակալ նւաճումների
Դրատումներով.

Բրոնզէ կոթողներ եւ յուշարձաններ
Բռնակալների յաւերժցման համար.
Օթէլներ ու ցիրկ՝ եռուն կրքերի
Եւ անասնական ըմբշամարտի վայր.
Համալսարան՝ պալատներին՝ կից,
Երկրային կեանքի, տիեզերական
Գիտութեանն անհաս.

Մատենադարան՝ ցեցի կերակուր
Փոշոտ զրքերով.

Մուգէները սին.

Կամուրջները յա՛ղթ.

Եւ կայարաններ, պօստ-հեռագրատուն,
Աշխարհը պատող լաբիրինթ ցանցով.

Բանտերը մռա՛յլ.

Բերդերը դաժան, աշտարակներով,

Խոժո՛ռ, յաղթամհամ,

Ժայռերի նման երկինք են ցցւած.—

Օ ես սարսափով,

Ես շնչին պիգմէյ, հեռու եմ փախչում:

Եւ զգում եմ ես,

Որ դարեր կանցնին

Ու օրեր կը գան,

Երբ Դու աւելի հպարտ ու լաւիշ

Պէտք է ծառանաս երկնքի դիմաց.

Եւ քո ապագա ահռելի ուժը,

Վիթխարի Բաղա՛ք,

Այսօր իմ տկար ուղեղով արգել

Անգօր եմ, անգօր:

Վիթխարի Բաղա՛ք.
Երբ անցնում եմ ես
Ծաղկուն, ծառաշատ
Քո կանաչազարդ լայն փողոցներով.
Ու տեսնում եմ ես—
Աէրօպլաններ—օդում սալառնող,
Բիւր վէլօսիպէտ, կառք, մօտօցիկլէտ,
Աւտօմօբիլներ, էլէկտրաքարշեր.
Եւ շոգեկառքեր,
Հեւիհել շնշով,
Երկաթուղիով առաջ սլացող.

Երբ լսում եմ ես—
Խաժամուժ կանչեր, ճիչեր ու սուլոց,
Գողում ու գոչում, անդուլ աղաղակ,
Որոտից էլ խենթ դիւական համերգ
Թնդում է ուժգին.

Զգում եմ այնժամ,
Խաժամուժ Բաղա՛ք,
Որ թոյլ զրիչիս տկար խօսքերով
Երգել քու ժխորն՝ տարերքին մրցող,
Անգոր եմ, անգոր:

Վիթխարի Բաղա՛ք.
Երբ անցնում եմ ես
Ծաղկուն, ծառաշատ
Քո կանաչազարդ լայն փողոցներով.
Ու տեսնում եմ ես—
Աէրօպլաններ—օդում սալառնող,
Բիւր վէլօսիպէտ, կառք, մօտօցիկլէտ,
Աւտօմօբիլներ, էլէկտրաքարշեր.
Եւ շոգեկառքեր,
Հեւիհեւ շնչով,
Երկաթուղիով առաջ սլացող.

Երբ լսում եմ ես—
Խաժամուժ կանչեր, ճիչեր ու սուլոց,
Գողում ու գոչում, անդուլ աղաղակ,
Որոտից էլ խենթ դիւական համերգ
Թնդում է ուժգին.

Ջգում եմ այնժամ,
Խաժամուժ Բաղա՛ք,
Որ թոյլ զրիչիս տկար խօսքերով
Երգել քու ժխորն՝ տարերքին մրցող,
Անզօր եմ, անզօր:

Եզը տեսնում եմ ես—

Թեթեւ վաստակի, կախարդիչ ոսկու

Տենչերով հարքած,

Բիրժա են վազում պարագիտ, մակլէր՝

Դիւահար, անքուն,

Փնտրող հայեացքով, խորամանկ ու նենգ.

Բիրժայում անտես շարժում, եռ ու զեռ.

Գերբնական ուժով աճող ակցիաներ...

Գահավիժօրէն ընկնում են յանկարծ...

Հրճւանք ու սաքսափ իրար յաչորդում.

Այստեղ հրճւանքից, այնտեղ սաքսափից

Խեղագար խմբեր.

Օրէնքին հաճոյ թաւանի մրցում

Զէնիթըն հասած.

Ծոռն աժիօտա՛ծ...

Երբ տեսնում եմ ես—

Ամեն արդ ու զարդ,

Ոսկին ու արծաթ, պլատին ու զոհար,

Մարգարիտ, զմրուխտ, թանկագին ակներ

Գանձերը բոլոր,

Ամեն կողմերից

Ոսկու կոտորուն՝

Բանկերդ են հոսում.

Համայն ն իւթեղէն, հոգեղէն կեանքի

Հանգոյցը կնճռոտ

Հզօր բանկերիդ սուր ճիւղաններում.

Եւ տեսնում եմ ես —

Գոռոզ արքաներ, իշխան, նախարար

Բանկերիդ լակէյ.

Մարգարտ, զինավառ, ահեղ բանականեր

Ամեն ժամ պատրաստ

Բանկերիդ կամքով

Վազելու դէպի արնաներկ կոիւ.

Եւ գոռ քանկերիդ նաւերը հակա
Լողում են հեռո՛ւ,
Աշխարհիս քոլոր ովկեանոսներում.
Դաւեր ու ինտրիգ, լկտի արշաւանք
Դէպի գաղութներ.
Արիւն-պատերազմ, անք ու սարսափ
Բանկերիդ ծնունդ.
Բանկերդ՝ վհուկ.
Բանկերդ՝ վամպիր.
Բանկերդ են իշխում աշխարհիս վրա.

Զգում եմ այնժամ,
Դու վհուկ, վամպիր,
Թալանչի Բաղա՛ք,
Որ իմ դողդոջուն տկար քաղուկով,
Ես հէգ վիրաբուժ,
Բանալ մի առ մի ու բուժեմ այսօր
Այլանդակ մարմնիդ, այլանդակ հոգուդ
Վէրքերը ժահրոտ,
Անգոր եմ, անգոր:

Այլանդակ Բաղա՛ք,

Ոսկու կռատուն.

Երբ տեսնում եմ ես—

Ոճիր ու տերրօր-ահաբեկումներ.

Եւ սրբագործւած օրէնքի առաջ

Անլուր կողուպուտ.

Ուժը՝ իրատունք.

Բանտ, շղթա, արքայ, արիւն-կախաղան
Թոյլերի համար.

Դատարանը լոկ անամօթ կեղծիք.

Խրիսպրուէնցիան՝ կեղեքւան արեւստ.

Իրաւագէտներն՝ մի մի խրտւիլակ,

Յաւիտեան սոփեստ,

Բուժ, արծաթասէր եւ պնակալէզ,

Վերին խաւերի գործիքները մուժ...

Եւ տեսնում եմ ես. —

«Ինտելլիգենցիան»...

Ինժիներ, բժիշկ, գիտուն պրօֆէսսօր—

Անժար ու անգէտ.

Շողորորթ զրշի տխմար քննադատ.

Անտաղանդ հոգու անյոյս քանաստեղծ.

Քծնող դերասան. եւ անյոյզ երգիչ.—

Բոլորն հացկատակ.

Եւ դեղին մամուլն ամենից անա՛րգ...

Ծրբ տեսնում եմ ես,
Անաթօթ Քաղաք,
Շուր, փայլ ու պծրանք, քո կեանքը շայտ.
Անվերջ թղթախաղ.
Քէֆեր ու խրախճանք.
Պարահանդեսներ.
Ջեղիս ու անառակ.
Էլէկտրականութեան լոյսով հեղեղած
Գարեջրատներ, կաֆէ-ըէստօրան.
Մայրից-ծայր լեցուն այցելուներով.
Շամկայն ու լիկեօր հոսում են առատ
Աղբիւրի նման.
Արքում են անյազ
Ոսկու, արծաթի երկրպագուներ—

Ճաղատ գլուխներ, քթաՄիտ դէմքեր,
Սիֆիլիսիկներ,
Սափրած, լալստուն,
Քրտինք են հոսում.
Ճարպոտ աչքերում
Դիւական ժպիտ,
Անասնական կիրք, տոփանք է եռում.

Կանայք զարդարուն
Եւ անուշահոտ իւղերով օծւած,
Ունք, երես, շրթունք գոյներով ներկած,
Կուրծքերն հոլանի, թեւերը արծակ,
Կօկէտ ու կրքոտ
Դիւթում են ցինիկ.
Ու կանչում են հեզ... աչքով եւ ունքով.
Ու կանչում են ինձ...
Ու կանչում են ձեզ...

Եւ անցնում եմ ես
Բանով փողոցի ասֆալտ մայթերով,
Ուր պոռնիկ կանայք,
Վաճառքի ելած,
Արծակ համարձակ կանչում են խուպ՝ տ...
Դէպի մօտակա անշուք համարներ—
Վաղւա՛ն սաքուստի կանխիկ վճարով,
Իրենք անզգա,
Յագուրդ տալու ինձ...
Յագուրդ տալու ձեզ...

Օ՛, զգու՛մ եմ ես
 Ու տեսնում եմ ես,
 Ո՛վ դու անառակ, շողշողուն Բաղա՛ք,
 Թէ ի՛նչ դիւական ուժեր կան քո մէջ:
 Ինչքա՛ն առատ թոյն
 Կաթիլ ու կաթիլ,
 Ամեն-ամեն օր
 Հեցնում ես դու իմ երակների մէջ:
 Իմ հոգին առողջ, իմ միտքը պայծառ,
 Իմ կամքը երկաթ—
 Մշուշն է պատում,
 Մշուշը փառքի, փայլքի, տոփանքի,
 Հեշտասէր կեանքի.
 Ու ես աննշմար,
 Թոյնովդ արթած,
 Թաղում եմ քիչ-քիչ քո նուրբ ոստայնի
 Թաւուտ ցանցերում...
 Ու թում է ինձ,
 Որ խեղդում եմ ես,
 Որ էլ ինձ համար չկա մաքուր օդ.
 Որ թոյլ բազուկով, ես շնչին էակ,
 Փշրել ցանցերդ՝ դիւական, հօօր,
 Անառակ Բաղա՛ք,
 Անզօ՛ր եմ, անզօ՛ր:

Դիւական Բաղա՛ք.
 Երբ տեսնում ես—
 Զո շքեղ կրօքից,
 Անշուք, բայց խրոխտ գործարանների—
 Աշտարակածեւ ծխահաններով
 Ամպերի նման,
 Զուլա ու քուլա երկինք բարձրացող
 Ծուխ ու գոլորշին,
 Կայծերի խուրճեր,
 Թանձր շերտերով ճակատդ են կնճռում.
 Ու այնպէս անվախ
 Անձրեւ, կեղտ ու մուր
 Թքում են վերից փառահեղ դէմքիդ.
 Եւ ցնծում ես դու.
 Ու ցնծո՛ւմ եմ ես...

Երբ տեսնում եմ ես—
 Զո իսկ արգանդում,
 Գործարանների կամարների տակ
 Հսկա անիւներ պտոյտ են գալիս
 Կատաղի թափով.

Ու նրանց թափեց շէնքերդ հզօր
Դողում են հիմքից, դողում են անզօր.
Թրթռում եմ ես...

Եւ տեսնում եմ ես—

Դիւական ուժերդ անթիւ վրնաերով
Մէկիկ ու մէկիկ մեխւած են այնտեղ,
Դործարաններում,
Մեքենաներին.

Դիւական ուժերդ կրակ են ժայթքում,
Կրակ են ժայթքում անմար հնոցում,
Դժոխք-հնոցում լաւա են թքում.

Հափում են պլատին, արծաթ ու ոսկին,
Երկաթը ազնիւ, պղինձ ու կապար.
Չուլում են դրամ.

Չուլում են մահւան հրապառ զէնքեր
Քո փառքի համար.—

Թնդանօթ ու ոռւմք, հրացան ու փամփուշտ
Սւին ու սուսեր.—

Որոնք որ մի Օր,

Աննման մի Օր,

Պիտի որոտան, մռնչան քո դէմ...

Ու լսում եմ ես -
Գործարաններից
Հազար զարկերով, հազար ու հազար
Հաց, ծիչ, աղաղակ, թնդին ու որոտ—
Հարագուժ համերգ—
Թնդում է անյաղթ քո դէմ յանդիման...
Անըմբռնելի հոգուդ անատակ,
Հոգուս հարազատ...

Եւ տեսնում եմ ես -
Գործարաններում,
Ամեն ակնթարթ,
Ամեն շարժումով,
Ամեն զարկի հետ
Միլիոն կին ու մարդ վառում են նոր կեանք
Արին-քրտինքով...

Օ սուրբ Աշխատանք,
Որ ամեն քարիք ծնում ես Այսօր
Մուրճի հարաժող
Տանջանքի քովից,

Որ վսեմ վաղւան երջանիկ օրեր,
Մարդկութեան համար,
Դարընում ես այստեղ,
Ես Քեզ եմ սիրում.
Ու պաշտո՞ւմ եմ Քեզ...

Եւ տեսնում եմ ես—
Կեղտի ու մրի, նզովքի զաւակ
Գործատրների շարքերը անխոնջ,
Որպէս կարաւան,
Խոնաւ որջերից,
Շարան ու շարան,
Պատուհանիս տակ,
Ամեն ծայգի հետ հոսում են շուապ
Դէպի գործարան—
Քրտինք թափելու մինչեւ մութ գիշեր.
Ու կանչում են ինձ
Այնպէս մտերիմ—
Դէպի աշխատանք,
Դէպի աշխատա՞նք.

Երբ լսում եմ ես—

Արտակարգ ժամին,

Դաւադիր հոգով ու խորհրդաւոր,

Ճշակն է սուլում.—

Մեռնող Բաղարի Գութկանն ահաւոր,

Ծնող Բաղարի մեծ Աւետարեւր—

Գութում է անդուլ՝

Դո՛ւլ. Դո՛ւլ. Գործադո՛ւլ.

Ահ, ցնցում եմ ես.

Ահա ակնթարթ...

Ու տեսնում եմ ես—

Դաժան ամբոխի գլուխների ծո՛ւլ.

Փողոց, զործարան ծուլել են իրար.

Չուլում եմ եւ ես Ամբոխի գրկում.

Ահեւի միտի՛նգ.

Անհամար քանւոր.

Կուրծքելը արձակ, աչքերը արիւն—

Բոցեր են ժայթքում,

Բազուկները վե՛ր,

Զայրոյթը հոգու քրտուկները կազմած,
Ամբոխի ծնունդ հոծտորները գիւ՝
Կրակ են թափում հրդեհ՝ շուրթերից,
Վառում ամբոխից,
Վառում Ամբոխին.
Ամբոխը եռում կաթսայի հման,
Եռում եմ եւ ես կաթսայի շոգուց,
Բորբոքում Կրակն ամենքի հոգում.
Ամենքի հոգին ծուլւած իմ հոգուն...

Ու լսում եմ ես,
Որ թնդում է վէս
Ինտէրնացիօնալ—
Յաղթական քայլերգ.
Ծածանում է սէգ արնագոյն դրօշ.

Շարժում են տներ, շարժում է փողոց.
Քաղաքից հսկա Ամբոխը հիմա
Քայլում է ըմբոստ.
Քայլում եմ եւ ես. քայլում եմ ըմբոստ.
Քայլում եմ ըմբոստ...

Ու տեսնում եմ ես...

Զքնադ տեսարան.

Ոսկինների դէմ,

Դէս անդ պայքար

Վազում է Ամբոխ:

Մեռնող Կապիտալ՝ վարժկան գնդերով,

Անմահ Աշխատանք՝ Կարմիր բանակով—

Ոսկի ու Ամբոխ

Շանթում են իրար...

Գողում ու գողում, որոտ ու աղմուկ,

Լաց, ճիչ, աղաղակ,

Շաչիւն ու դուրիւն,

Ռազմական ժխոր, դիւական համերգ.

Զաղա՛քն է թնդում:

Սարերից հսկա, ալիքների պէս,

Ոսկի ու Ամբոխ,

Ուժգին շառաչով քաղխում են իրար.

Զրոհնքի մտած, փրփուր են թքում.

Շնչում հեւիւն...

Եւ երկու տիտան—Վիշապ, Աժդահան,
Երկուն էլ հիմա
Կատաղի թափով
Գրոհ են տալիս հսկա Բաղարքում.
Գրոհ են տալիս... Ու յետ նահանջում...
Նորանոր ուժով
Վճռական կուտւմ քաղխանելու կրկին,
Հզօր Բաղարքից տիրելու երկրին:

Ու իմ պարզատես, մարգարէ մտքով
Օ, տեսնո՞ւմ եմ ես,
Որ դու անառակ, մեռնող Կապիտա՛լ,
Գործաւոր դասի, Աշխատանքի դէմ,
Ըն թոյլ ուժերով մաքառել Այսօր
Ըմբոստ Բաղարքում—

Անգօ՛ր ես, անգօր:

Վ Ե Ր Զ Ե Ր Դ Ա Ն Բ

Թոխի՛ր իմ Պօէ՛մ,
Աննմա՛ն Պօէ՛մ.
Ճախրի՛ր ամեն տեղ,
Ամեն մի երկրի երկնակամարով.
Հուաշադի հետ
Հնչի՛ր ամեն քին.

Ով է՛լ որ լինի,
Ուր է՛լ որ լինի,
 Չայնի՛ր դու խրոխտ.

—Մանուկը ծնաւ,
Արեւամանո՛ւմ,
Երկու տիտանի
Արիւնոտ կուից,
 Ըմբոստ Բադաքի
 Տանջանքի քովում:

Թոճի՛ր, իմ Պօէմ,
Ամմահ՛ն իմ Պօէմ.
Սաւառնակների
Պողպատ թելերով
Ճախրի՛ր երկնքու՛մ.
Հսկա սարերի գագաթներից վե՛ր.
Տիեզերական անհունութեան մէջ.
Եայծակի թափով
Սլացի՛ր յաւէտ.
Անհասանելի
Քո քարծուներէից,
Որոտից էլ խենթ,
 Զայնի՛ր դու խրոխտ.

—Սուր Աշխատանքի,
Աշխատաւորական ըմբոստացու՛մի
Յաղթական ժամին—
 Ողջո՛յն Ամենքին:

19/II 20 թ.
Իլինսկայա սանատորիա
Մօսկվա

ԱՐԾԻԻ ԽՆՋՈՅՔԸ

ԱՌԵԿ



I

Դեղին-ձաճից դէպ արեւելք,
 Նարմիր Մարի կատարին,
 Ազատների ժողովարան—
 Ժայռի ձերպում, արծւի մօտ,
 Տարեմուտին,
 Շաքաթ իրկուն,
 Լուս կիրակի,
 Գեղեցկատես
 Մի հանդէս...

Զարճութիւն, երգ ու պար—
 Խնջոյք կար:

Երեք զիշեր, երեք օր,
 Գիշեր ու զօր,
 Փողերը զիւ փողհարում,
 Թճրովներն են որոտում.

Ու կանչում են բոլորին—
Մեր աժդահա մեծ սարերի,
Մառի—թփի,
Մրրիկ, որոտ ու կայծակի,
Գարնան հզոր

Արշալոյսի
Վարմիր-կրակ շողին—
Սովոր
ու փրփրուն
Մովը—
Միրող
Թռչունների
Երամներին:

Այս խնջոյքին
Եկել էին,
Որ ասեմ,
Անհամար
Թռչուններ...
Հիւրերի չափ
Արծիւն նոյն իսկ
Տեղ չունէր:

Նկե՛լ էի՜ն—

Ինչ աննման,

Զիւնից ճերմակ,

Սաթից էլ սեւ,

Վարդից կարմիր,

Թփից կանաչ,

Ծրկնից կապոյտ,

Ծիածանի

Ամեն գոյնի... Էլ սիգաճեմ,

Վեր սաւառնող

Ու լողացող,

Ու մի խօսքով—

Էս աշխարհի

Ամեն երկրի

Արտասովոր

Այնպէ՛ս հաւքեր,

Որ չէք տեսել ձեր կեանքում:

Այն էլ յիշեմ,

Որ մենակ,

Արդեօք դիտմամբ

Թէ մոռացմամբ,

Զէի՜ն կանչել սաղերին:

Այ՛, սազերի սել օրին...

Այդ օր տխուր, միայնակ,

Ազատներից

Ու արծւից

Անարգւած,

Նստել էին ժողովի.

Վիճում էին

Զեզ պէս տաք-տաք ու յուզւած,

Որ արծւի մօտ երկու սազ

Ուղարկեն շուտ պատուիրակ...

Ու պարզւի—

Թէ ինչո՞ւ տօն օրին

Մոռացել են սազերին:

Եւ պատուիրակ

Ծրկու սազ

Լուս անուտ

Կիրակի

Ճամբա ընկան:

Երեքշաբթի

Մութ իրիկւան,

Ծկան-հասան

Արծւի մօտ:

Շուր ու փայլը հանդէսի,
Նորաճաշակ արդն ու զարդ
Եւ ամենքին՝ զոհ, զւարթ—
Մեր սագերը որ տեսան...

Տխուր-տրտում,
Դարդը սրտում,
Առաջ եկան,
Պատիւ տւին
Ազատներին
Ու արծւին.
Ասացին.

—Բարե՛ւ, արծիւ.
Հոգսերդ շա՛տ, անսպաւսա...
Ուրախ սրտով
Ապրես յաւէրօ՛ւ,
Թէ որ անվերջ
Մեր ցաւերն էլ դու հոգաս...

Հեռո՛ւ, անշուր այս ծերպու՛ւ
Զո թմրումն է որտտում.

—Բայց դո՛ւ, ահա,
Օ, խնդրո՞ւմ ենք,
Մի գայրանա,
Թէ անհամեստ քո դէմ խօսենք
Ահամայից:

Քո հիւրերից
Ամենից շատ յարգի ենք մենք,
Որովհետեւ, ինչպէս գիտես,
Ազնւական ծագո՞ւմ ունենք.

Մեր պապերը մու՞թ գիշերին
Հոսմն առան,
Մեր պապերին
Նոյն իսկ կայսրի պաշտօն տաքան...

Իսկ ա՛յժմ... ափսո՛ս...
Հազա՛ր ափսոս,
Հիւրերդ շատ, տեսակ-տեսակ,
Հիւրերիդ մէջ չկա մի սագ.

—Եւ դո՛ւ, արծիւ—
Թէ խորհէիր
Ու սագերին
Որ կանչէիր
Քո խնջոյքին —
Դու գիտես թէ
Սագերն այնժամ ինչ կանչին.
Արծի համար
Սագերը վառ
Փունջ կկոնէին.
Երկնուց աստղեր կիջեցնէին,
Իր հիւսէին
Թագ ու պսակ աղամանդէ.
Ու կարգէին քեզ թագաւոր,
Որ ասլիքի դու քախտաւոր:
Եր կազմէին
Եւ մի հանդէս շնաշխարհիկ,
Որ ասլէին քուոր մարդիկ.
Եր կանչէին կայսրին,
Անշո՛ւշտ,
Որ թռչուններդ ուտէին կուշտ.

—Օւ դո՛ւ հիմա
Մի քարկանա.
Ինչո՞ւ խորշել
Աստծու տւած հանգիստ կեանքից.
Ինչո՞ւ, ինչո՞ւ
Փախշել հեռու
Բարի կայսրից
Ու մարդկանցից...

Ու միշտ հպարտ
Ու միշտ աղքատ
Տանջել իզուր...

— Լսի՛ր, Արծիւ.
Հօ գիտես որ
Սազերը միշտ,
Մի՛նչեւ այսօր,
Մարդկանց շնորհիւ,
Աւերում են կուշտ,
Խաղաղ-անդորր,
Զւարթ, անհոգ ու անվիշտ:

—Զե՛նք ուրանում,
ի հարկէ,
Որ ժամանակ,
ժամանակ,
Զափազանց գէր
Ու շատակեր
Որ եւ է սագ
Մարդու ձեռքով
Պէտք է մորթի
Ճաշկերոյթի
Ժամանակ...

Ի՞նչ անենք որ
Օրից մի օր,
Մեր աշխարհի
Օրէնքով,
Այդպէս չնշին
Ու անարժէք
Հարկ պիտի տանք
Մարդ-Լ՛րարչին...

— Հէնց լա՛ւ է որ,
Ամենայն օր,
Դուք էք ասում,
Թէ ամեն փորձ
Ու վսեմ գործ
Ջո՛ր է ուզում...

Թող որ այսօր
Թոշուն-զազան, մարդ ու արքան
Սազ ու արծիւ
Մի ուխտ անեն նղբայրական,
Սո՛ւրբ ու հզօր,
Ամենագօր...

Որ ծայրէ ծայր
Երար աշխարհ,
Երկին ու ծով,
Նախանձով,
Ողջունի մեզ,
Ողջունի քեզ...

Ազատների երամներով
 Անցաւ շշուկ,
 Զսպւած ծիծաղ...
 Նրանք այդ օր
 Աւելի քան յաղթ ու հօօր,
 Խեղճ սագերին
 Դառն ժպտով
 Ու անվրդով
 Ժպտացին:

Հսեց ու լուռ արծիւն հանդարտ,
 Թռչունը սէզ.
 Հսեց հանդարտ,
 Ասեց հպարտ
 Սագերին հէզ.

— Զառլիկ ու գէր,
 Մստտ սագեր.

Նրդում եմ ես
 Ազատների ազատ սերունդ,

Թողունների
Երամ-խմբով.
Ազատների
Ազատ կամքով,
Արեւասէր
Ու փրփրուն
Հոգու թափով—
Խղճո՞ւմ եմ ձեզ:

—Հսել եմ ես,
Որ թոյլերի
Կաշին քերթող,
Արիւն խմող
Շատ մարդկանց մօտ,
Ճաշկերոյթին,
Դառան մսի
Եւ գինու հետ,
Դուք մեծ յարգանք,
Պատիւ ունէք...

Յարգանք է այն
Թէ՛ անարգանք,
Հսէք միայն.

—Աստա՛հ էք որ շունէք հոգսե՞ր...
Աստա՛հ եմ որ՝ շունէ՛ք եւ սէք
Ազատ կեանքի
Ու քարոճունքի:
Չունէ՛ք մեզ պէս
Հզօր թեւեր,
Որ դուք նոյնպէս
Սլանաք վեր:
Չունէ՛ք մեզ պէս
Սարի սո՛վոր
Աչեր կրակ,
Աչեր կտրուկ.
Ապրէք այդպէս,
Տարին քուրոր,
Ցած ու անարգ,
Կոյր ու ստրուկ...

—Աստա՛հ էք որ
ապրում էք կո՞ւշտ...
Զա՛րթ էք դուք...

Աստա՛հ եմ որ—

Ապրում էք դուք
Ծնւած օրից
Թոյլ ու անկամ,

Վզերդ ծուռ.
Հացի կարօտ...
Հա՛ւ է՝ չապրէ՛ք,
Հա՛ւ է՝ մեռէ՛ք,
Քան թէ նորից,
Ամեն անգամ,
Այնպէս անդուր,
Կեղտ ու մրտա
Հաց աղերսէք...

—Աստ էք որ

Ապրում էք դուք կուշտ ու զաւրթ,
Ասում եմ ո՛ր—

Թափում է ձեր արիւնը վարդ.

Վարդից կարմիր,
Վարդից զաւրթ
Ձեր կեանքի զարդ—
Կեանքի կարմիր
Արիւնը վարդ...

—Աստու էք որ շունիք դուք վիճտ...

Աստու եմ որ մորթտու էք միշտ

Ճաշի համար

Համեղ պատառ

Զաղլիկ ու գէր,

Մսո՞ւտ սագեր...

—Երդտու եմ ես.

Թռչունների

Աչերը վառ,

Ճանկերը սուր,

Կտուցն երկաթ,

Թեւերն պողպատ,

Հոգին հսկարտ,

Երգը անուշ,

Սէրը քնքոյշ,

Կամքը անյաղթ—

Լինին վկա,

Որ ձեզ համար

Ազատների

Բարձունքներու

Օ, տեղ չկա'...

—Զաղլիկ ու գէր

Մսո՞ւտ սագեր...

—Գնացէք տուն...

Սովորեցէք կարապի պէս լողալ ծովում,
Կռունկի պէս երամ-երամ սուրալ օդում.

Ու դայլայլէք սոխակի պէս ալ-վարդերին.

Կաքաւի պէս հողի վրա

Վազէք անահ...

—Ապրէ՛ք ազատ—

Մեր մրրկուն,

Մեր խենթ հոգուն

Հաքազատ...

Արծիւն լոնց:

Դատարկ ծնող

Սագերը երբ հոսմ անցան,

Համեմներով

Կայսրի համար տապալակեցան:

912—920 թ.

Թիֆլիզ-Մօսկվա.

ԳՈՂԳՈԹԱ

ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻՒՆ

U.S. DEPT. OF AGRICULTURE

OFFICE OF THE SECRETARY

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ը.

Ես անցա շա՛տ ու շատ երկրներ,
Հեռաւոր աշխարհից ես եկա,
Որ ծեղ մօտ, քրտնաթո՛ր եղբայրներ,
Ես երգեմ Գողգոթան մօտակա:

Ես եկա հեռաւոր աշխարհից
Իմ երկնող, կուսական քրոջ մօտ,
Որ երգեմ ես նորից ու նորից
Գարունքի վարդաշող առաւօտ.

Ես անցա ծուռ ու մուռ ճամբաներ.
Իմ օրերն սահեցին միւթ ու լոյս...
Զեզ համար, իմ քոյրե՛ր, եղբայրնե՛ր,
Ես կերգեմ լոկ ժպտուն արշալոյս:

Արշալոյս, նորածին սէգ վահագն,
Որ կուգա խաւարի անդունդից.
Այն վսեմ երկունքի գեղ զաւակն,
Որ կելնէ մայրական արգանդից:

Ես գիտեմ այդ գիշերն խաւարի,
Որ առտուն կընծայէ արեգակ.
Կը սրաշտեմ սուրբ արգանդն մայրերի,
Որ կերկնէ արիւնով իր զաւակ:

Ես անգա արիւնի աշխարհքով.
Դիտեցի եւ աւեր իմ վաթման.
Ու եկա վեհ ուխտի ես ձեր քով,
Որ հանեմ ձեզ նորոգ Դողգոթման:

Մո՛ղթ էր այն օր, այն ցուրտ գիշերն—
անլուսին,

Ու մեր սրտում բուն էր դրել
սեւ մրմուռ.

Բայց այն գիշեր, դաժան գիշերն,
միասին,

Գնում էինք մեր ծամբէքով
ծուռ ու մուռ:

Ծամբէքս վե՛ր, մըշտ դէպի վեր,
սարն ի վեր.

Նտեւներէս մարած լոյսերն—
իմ վաթման...

Օ մեր երկիրն արիւնլւա...
մինչ աւեր...

Գնում էինք մենք դէպի նոր
Գողգոթան:

Ծափն էր նւ խաչն, որ լուռ առանք
մեր ուսին.

Ու յետ թողինք զուղումների
այն վաթման.

Ու ծռու ու մուռ այս ճամբէքով,
մրասին,

Քայլում էինք մենք դէպի վեր
Գողգոթման:

Մո՛լթ էր. դստա՛ն... կար մի կածան—
արահետ.

Ու մենք եարուտ. ու մեր հոգին
սեւ մրմուռ.

Խաւարներով, միշտ անբաժան,
իրար հետ,

Գնո՛ւմ էինք, զնո՛ւմ էինք...
ծուռ ու մուռ:

Ծուռ ու մուռ, ծուռ ու մուռ, ա՛յ ճամբէք,
Ո՛ւր կերթաք, կը թողնէք իմ վաթան:

Նոր մրմուռ, անսարսո՛ւտ այ ախրէքք,
Ո՛ւր կերթաք դէպի վեր Գողգոթան:

Ծուռ ու մուռ, իմ մրմո՛ւտ նոր ճամբէք,
Օ թողի՛ք ու անցաք մեր վաթան:

Իմ ամբուլ, իմ բլրո՛ւլ այ ախրէքք
Դուք քայլէ՛ք, դուք ելէ՛ք Գողգոթան:

Արիւնի, գուլումի իմ վաթա՛ն,
Ո՛ւր կորան, ո՛ւր կորան քու ճամբէք:

Դէպի վե՛ր, դէպի նո՛ր Գողգոթան
Դուք քայլէ՛ք ու քայլէ՛ք այ ախրէքք:

Իջնում են Սարից մշուշները—մէգ.

Դէմ առ դէմ քամին սուլում էր անդուր

Եւ սուլոցներով սողացին մէկ-մէկ

Գերեզմաններից սուերները լուռ:

Դարերի շարքով, դաւադիր միջին,

Ելնում են այդպէս տեսիլքներն յաւէտ

Քամու թեւերով, թեթեւ, անմարմին,

Դալիս են նրանք մշուշ-մէգի հետ:

Դալիր են մոայլ ու ամեն անգամ

Նգովք են թափում ծայներով անլուր...

Անլուր մահերթին, ա՛մեն մի անգամ,

Հայրենի երկրով անցնում է սարսուռ...

Ու թշառ երկրիս սուերները սաւ

Ծիծին խաւերում պահում են նոքից,

Որ մշուշ-մէգով, անմարմին, անծեւ,

Դէպի դուրս սողան գերեզմաններից:

IV Ե Ր Գ.

Մշո՛ւշ—մահերթ,

Անցի՛ր.

Անուշ իմ երթ

Անծիր

Թող երթա

Դէսի վեր

Գողգոթա:

Է՛յ դաժան

Զամիններ.

Մի՛ փշէք.

Իմ շուշան աղջիկնե՛ր

Հրաշէկ,

Իմ քալէ՛ք

Սիրասուն,

Իմ աղբէ՛րք

Լեռնասուն,

Ձեր երթով

Թող թնդա

Գողգոթա:

Աշոտ — քաղաք,

Ռէք էք.

Իմ սա՛ղ — քաղաք,

Հո՛ւն էք.

Շուշա՛ն — ամբողջ,

Բուրէք.

Ախրէ՛քք, իրար

Փարէ՛ք. —

Նոր գոհեր

Անգիներ

Կերթան

Դողգոթան:

Մշո՛ւշ — մահերթ

Անցի՛ր,

Հէ՛յ...

Անուշ իմ երթ

Ասծիր

Է...

Ասծիք է իմ երթ, ծայր շունի ծամբէս-
 Հին—հին օրերից ծուռ ու մուռ կերթա.
 Այս դաժան գիշերն յոգնած եմ այնպէս...
 Բայց ես վաղ թէ ուշ կեւնեմ Գողգոթա:

Ու կեւնեմ անշուշտ. եւ խաչը ուսիս.
 Այդ հաւատ չէ լոկ. այլ խոր համոզմունք.
 Թող մշուշ իջնէ հարաւ ու հիւսիս —
 Գիտեմ ես զարնան կենարար քուրմունք:

Որ զա ցուրտ ծմեռ, զա սառնամանիք,
 Ու շուրջս վայէ մահաշունչ քամին—
 Ես պիտի խնդամ՝ հերի՞ք է, հերի՞ք,
 Գարունը շողաց երկունքի ժամին:

Իմ կամքն ու հոգին՝ պողպատից ամուր.
Ծաղր է ինձ համար բաժակն փորձութեան:

Ինչքան էլ անցնի ժամըդս ծուռ ու մուռ,
Ես պիտի ելնեմ Գարուն—Գողգոթան:

VI Ե Ր Գ.

Քսան դար, կարծես, անցաւ այն Օրից,
Երբ Մարդը խոնարհ խաչակու գնաց:

Քսա՜ն դար, սակայն, նորից ու նորից,
Արիւն—Գողգոթան մեզ բաժին մնաց:

Քսան դար, անշուշտ, անցաւ այն Օրից.
Ու մարդը անվերջ խաչակց ինքնակամ:

Քսա՜ն դար անցաւ... ու Այսօր նորից
Գողգոթան կելնեմ... Ես... վերջին անգամ:

Վերջին անգամ... մնաք բարո՛ւ
Աւեր օջախ, իմ վաթման.
Կորած ճամբէ՛ք, մնաք բարո՛ւ—
Ելնեմ Ես իմ Գողգոթան:

Մնաք բարո՛ւ սարեր ու ծոր,
Իմ հող ու ջուր, պաղ աղբիւր.
Մնաք բարո՛ւ եւ կաթնածոր
Մայրական ծիծ, ջերմ համբոյր:

Մնաք բարո՛ւ սարի սմբուլ,
Կանաչ ու թուփ հայրենական.
Մնաք բարո՛ւ բաղի բլբուլ,
Դառնուկ քալէք իմ սիրական:

Ծառալու հա՛րս, մնաս բարո՛ւ,
Ուռի դառնաս չրափին...
Մնաս բարո՛ւ, մնաս բարո՛ւ.
Աչքդ մնա իմ ճամբին:

Վ Ե Ր Զ Ե Ր Դ Ա Ն Զ.

Իմ ճամբէն հեռաւոր ու անծայր—
Բայց թողչքն իմ հոգուն՝ անեղեր:

Մինչ աշխարհն այս գիշեր անպայծառ—
Իմ հոգին լուսաշող տիեզեր:

Ես ելաւ դէմ առ դէմ թշնամուն.—
Իմ ուժերն անհատնոս, անսահման:

Ես կուի կը կանչեմ ամենուն,
Որ կերտեմ իմ աշխարհն աննման:

Իմ կուտաւ պիտ ընկնի վաշինգտօն,
Արիւնով թէ հոսէ Կալկուիթան,
Եւ Փարիզ եւ Բէրլին եւ Լօնդօն
Թող ապրեն իմ վերջին Գողգոթան:

Ծս կերթամ ճամբէքով վերամբարձ.
Ծս կեկնեմ գազաթներն կապուտան.
Դէսի յետ ինձ չկա վերադարձ.
Ծս կերթամ դէսի վեր Դողգոթան...

Դողգոթան թէ հասնեմ Ծս Այսօր,
Ծրկունքիս որ հոսէ եւ արիւն,
Իմ ջահէլ Օրերովն ալ-քոսոր
Պիտ վառեմ Ծս Կեանքի նոր Դարուն:


Ու կեկնեմ շարէ-շար, քիւր հազար.
Ու վերթամ ընկճուլու տարերքին...

Ծս կուգամ ծաղկունքով լալազար,
Որ սիրեմ ու փարեմ ամենքին:

Հոկտեմբեր 21 թ.
Բէրլին.

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՈՎԵՐ

Պ Օ Է Մ



Անուշ հովերով Ծաղկունք սարերից
Սահում են հեզիկ անուրջ ու գիշեր,
Մութի թելերով իմ հոգում նորից
Ծնունդ են առնում վաղեմի յուշեր...

Հինատուրց վկա քաղցրիկ օրերի—
Յուշեր վեհաշունչ սիրոյ անարատ,
Որոնք անմոռաց ամեն նոր-տարի
Ծնչում են այնպէս յոյզերով առատ.

Յոյզերով առա՛տ, սիրով բոցավառ,
Եւ սէրն էր հսկա սարերի նման.
Աժդահա սիրով գիշեր ու խաւար
Ծրկնում են մի լոյս բոսոր, աննման...

Դարո՛ւն աննման. երբ զիւ կարկաչով
Ժայռերին կայտառ զարկում են ալիք,
Հիւանոր փունջ-փունջ, ուրախ քրքիջով
Ալեաց կուրծերից կանչում են փերիք.

«Կապուտան ծովի ծաղկուն ափերին,
«Ծրը լուռ երեկոն իջնի մթնշաղ,
«Հարսներից շքնաղ ծովածին փերին
«Կը դիւթէ իր մօտ մարմնով լուսաշաղ.

«Կարապը արդէն հնչեց հոգեվար,
«Վճիտ ակօրդներ հանգան միասին.
«Միրոյ նաւորդներ, առոյգ, թիավար,
«Գաղտնապահ մութով սուրացէք կղզին.

Ամպն՝ր են հեռու ափերից վազում,
Սարի լանջերով իջնում են կամաց,
Ծրկիրը պատում մթին, սեւամած,
Լալիս են, լալիս. արի՛ւն է հոսում...
Ծրկնից վշտահար կանչում է երկիր.
Անգո՛ւսալ փոթորիկ, նոր հիմաւ երգիր,
Որ ծաղիկ յոյսով, սիրահար զարնան,
Ազատ մայիսին նրանք արթնանան...

I

Աշո՛ւն է, աշուն.

Գնում են հեռու հաւքերը նախշուն...

Կանչում են հասուն խաղող ու խնձոր,

Անտառ, սար ու ձոր

Շողում են հազար հիւթալի մրգեր,

Այգում ու դաշտում հնչում են երգեր:

Ամպտուն սարեւից

Սարի ջրերով սնած շէն ու գիւղ,

Գիշերն, անեղիւղ,

Շարան ու շարան իջնում են նորից—

Անհոգ նիրհելու ծմբան ցրտի դէմ,

Հանգչեն խնդադէմ.

Օջախների շուրջ պատանի ու ծեր

Ջրոյց բուրեն երգով լաղցրասէր:

Ամբոց քաղաքում,
Ամրան վերջի հետ, կեանքն է աղմկում.
Գալիս են արդէն հեռացած խմբեր,
Սրտով անհամբեր
Ողջոյն են տալիս հայրենի շեմքին,
Քաղաքն էլ զւարթ հնչում է կրկին:

Երգ ու աղմուկով
Վարժարաններում նստած իրար քով՝
Դասի են եկել, կարօտ են լոյսին:

Վաշէն եւ Լիւսին
Նորից իրար մօտ, նայում են ժպտուն,
Ժպտում են նրանց սարերը Ամպտուն:

Օ դո՛ւք ժպիտներ անմեղ, մանկական,
Որ փայլ էք տալիս դէմքերին զւարթ,
Ինչպէս անարատ շուշան եւ ալ-վարդ,
Ձեր բոյրը անուշ սիրում եմ այնքա՛ն:

Բացէք թերթիկներ անթառամ ծաղկի,
Կարմիր թերթիկներ՝ անմահ գեղեցիկ.
Ձեր թարմ շնչի մէջ եւ սէր վաղանցիկ
Վսեմ յոյգերով թող յաւէտ ծաղկի:

Սահում են մանուկ օրերը անհաս,
Սահում են անդարձ թոշնի թեւերով.
Անցած օրերից, պատանի հրով,
Գալիս են սիրոյ ժամեր վաղահաս:

Բացւում է կեանքի մի նոր արահետ
Սիրով տոգորւած սրտերի առաջ.
Ծնւում են մէկ-մէկ եւ վի՛շոտ եւ հառա՛չ,
Անհոգ մանկութիւն սահում է անհետ:

Մանկուտ օրերից, սիրով աննկուն,
Կապուած է Վաշէն գեղանի կոյսին.
Նա այժմ, որպէս շրջմուխկ լուսին,
Գալիս է հանդարտ ամեն իրիկուն,
Կանգնում սիրունու պատուհանի մօտ,
Անքուն գիշերներ նւիրում նրան,
Սիրող զրկի մէջ մի նոր որոյան
Երազում է նա մինչեւ առաւօտ:

Բայց զուր Լիւսին սիրում է անմար.
Հագիւ թէ նրանք հասնեն մութագի.
Որքան էլ ուզի Վաշէն երազի,
Հեռու է Լիւսին, անհաս իր համար:

Ինչո՞ւ սիրեցիր,
Անգո՛ւսալ պատանի, քո սէրը անծիր
Քանի՞ փոթորիկ օրեր կը տեսնի...
Երնէկ թէ կարօտ իր եարին հասնի:

Գեղջո՛ւկ ես, թշւառ.
Կեանքը քեզ հաճար գիշեր է խաւար...

Ինչո՞ւ սիրեցիր.
Անժի՛տ դու վաչէ, Լիւսին մոռացի՛ր.
Նա հարուստ աղջիկ, դու նրանց օտար,
Դու այդպէս հեռու ի զուր մի՛ երթար:

Սիրեցիր Լիւսին...
Լիւսին էլ քեզ հետ տանջի՞ միասին,
Ձեր սէրը, երնէկ, հասնի մուրազին:

Ու Լիւսին տխուր փակւած սենեակում
Լալիս է, Լալի՛ս, եւ լուռ հեկեկում:

Առանց Վաչէի անբա՛ղդ է Լիւսին,
Անբաղդ են անշուշտ նրանք միասին:

...ի գուր է, ի գուր... հերիք մորմոքի.
Հարուստ է Լիւսին, ժառանգ մեւիքի.
Իսկ սիրուն Վաչէն գեղջուկ շինական,
Հեռո՛ւ են նրանք վիհով ցեղական:

Հապա ինչ կասի մայրիկը անուս.
— Զէ, շէ՛, աղաթ շէ՛, դու իմ աչքի լուս,
Որ շէն օջախի աղջիկ գովական
Առնի մի քեասիք, այն էլ՝ շինական...

Ու նա վշտահար փակեած սենեակում,
Հալիս է, լալի՛ս, անվերջ հեկեկում...
Առանց Վաչէի անքաղղ է Լիւսին.
Անքաղղ են անշուշտ նրանց միասին:

...Ոհ անո՛ւշ երազ... պատուհանի դէմ
Այն ո՞վ է անթարթ նայում ժպտադէմ...

«Այդ դո՛ւես, Վաչէ՛, իմ կեանք, իմ արեւ,
«Ցուա՛ դու անմար իմ հոգուս վերեւ:

«Ապրեւ չե՛մ կարող մի օր առանց քեզ,
«Գուզէի մէկից որ սիրտս պոկես,
«Առնես հոգուդ մէջ. պահես ջերմագին,
«Բուժի քո շնչով հիւա՞նդ իմ հոգին...

— Լիւսի, օ՛ Լիւսի, ինչպէ՞ս եմ սիրում
Աչերդ աստղեր, մութին շողացող,
Իմ յոյսն է վառում այդ ջինջ աչերում,
Իմ վիշտն է թափած շիթերդ ցօղ-ցօղ...

Գիշերը մենակ կերթամ մութ ծորակ,
Վտակը քովէս կը հոսէ արագ.
Ճակատս զգոյշ կը շոյէ զեփիւռ,
Կը տա ինձ քնքոյշ շուրթերիդ համբոյր:

Իմ հոգում, Լիւսի, դու վա՛ռ կը մնաս,
Քո սէրն է հրդեհ՝ ժպտուն արշալոյս.
Բայ թէ մի վայրկեան դու ինձ մոռանաս,
Գիտցիր որ հանգա... իմ նո՛ւրբ վերջալոյս:

II

Ծաղկում է գարուն ծիլերով հազար,
 Զուգում են սլէս-սլէս դաշտեր ու արօտ,
 Շուշան, անմոռուկ, ծաղկունք լալազար
 Շնչում են անյագ եւ սէր ու կարօտ:

Գարնան շնչի հետ անուշ կարկաջով
 Զրերն ափերին տալիս են պաշիկ,
 Հերան բարձունքից ուրախ քրքիջով
 Հովիտ հն իջնում տղա ու աղջիկ:

Պէխ-աղբիւրի մօտ դալար կանաչում
 Կազմում են նրանք խմբական երգ-պար,
 Կարաւում զարթ, գոչում են, կանչում,
 Նորանոր երգեր հնչում անսպառ...

«Աղբիւրի մօտ քեզ սիրեցի,
«Բոյիդ մատաղ ալ տղա.
«Զիռն վրա արի անցի,
«Ոսկէմագով խալ տղա:

«Ծարդ մենակ նստել սարին...
«Սարից լուսնակ կը ցոլա.
«Կանչի՛, բլբուլ, զարկ շունգուրին,
«Ոսկէզանգուր ջա՛ն տղա:

— Սարի ջէյրան, իմ սիրելիս,
Ես քո քոյրով արքենամ.
Կրծքիդ վերան մի խալ ունիս.
Կուրծքդ մարմար, զոյգ շամամ:

Սեւ աշերուդ ես մարեցա,
Տուր ինձ անուշ մի պաշիկ.
Եարս հինցաւ, եարս մոռցա,
Քեզ սիրեցի, ջա՛ն աղջիկ...

Անցաւ վառ զարուն,
Հանգաւ եւ ամառ, անցնում է աշուն.
Երկինքը կապոյտ ծածկել են ամպեր,
Հասել է ծմբան մի շունչ ցրտաքեր,
Եւ հեզահամբոյր
Զիւնի շերտերով երկիր համապիտ
Առնու՛մ է համբոյր:

Մարեցին նոյնպէս
Պէխ-աղբիւրի մօտ երգերը պէս-պէս.
Մարեցին հանդարտ զեփիտ, անուշ հով.
Հանգչում է երկիր ծմեռւան նիրհով:

Դաժան ցրտերին
Վրա է հասնում քնքուշ նոր տարին.
Ուրախ են մարդիկ, հոսում են օրեր...
Տարին, երանի, այսպէս բոլորէր:

Ամբողջ քաղաքի կոկիկ դահլիճում
Նւագածութեան ծայներ են հնչում:
Ջւարթ հանդիպում զալիք նոր-տարուն,
Մանուկ նոր-տարին նայո՞ւմ է սիրուն:
Գալիս են շտապ մարդիկ անհամար,
Հաճոյքի օրեր հարուստի համար:
Ազնիւ մետաքսէ փարթամ հագուստով
Դահլիճ են մտնում նրանք անվրդով,
Ջուզւած ակներով, օղերն աղամանդ,
Փղոսկրէ հովհար: հովում է մարմանդ:
Դահլիճ է մտնում Լիւսին աննման—
Երկրպագուներ ուղեկից նրան,
— Օհ մեր դիցունին շքնաղ է, համեստ,
Զօնում են կոյսին հազար մի գովեստ,
Հոգեղէն հրեշտակ, գոհար է անգին,
Կարօտ են իր մի քնքոյշ հայեացքին...

Իսկ Լիւսին հետու

Փնտռում է միայն իր Վաչէն ուրու...

—Ա՛խ ո՛ւր է Վաչէն, ինչո՞ւ նա չկա.

Անփոյթ է նա միշտ, անսէ՛ր, անզգա:

Նա ինձ չի՛ սիրում...

Հապա էլ ինչո՞ւ Պէխի-աղբիւրում

Ծրդում էր ինձնով, նայում էր խելառ,

Ծրք բաժանւեցինք՝ այնպէս խղճահար

Հեռացաւ մոլար:

Ահա եւ Վաչէն...

Փողերն ամուլի ուժգին թող հնչեն:

Զէ, չէ՛, հնար չէ՛,

Լիւսին իր սիրուց ինչո՞ւ ամաչէ.

Սիրո՞ւմ է նրան.

Կուգեն բամբասեն, թող խօսեն վրան...

Թնդում է հզօր նւագը մէկից,
Առաջ են վազում զոյգերը վայլսի.
Արքում են սլարով, արքում նւագից,
Իրար գրկի մէջ վաշէ եւ Լիւսի...

Խաղում է արիւն նրանց երակում,
Չուլում են ինչպէս անբաժան մարմին.
Հնչիւնների հետ սրտիկն է երգում
Այրած շուրթերից գիշերւա ժամին:

Գիշերը խաղաղ եւ երանաւէտ
Հնչում է դիւթիչ մինչեւ իսկ հիմա...
Վաշէի ձօնած երգերում, յաւէտ,
Միրավառ Լիւսին ապրում է անմահ...

Յիշում է երգերն ընծայած իրեն,
Յիշում է անկապ, ուղեղով արքած:

«...Գիշեր ու անուրջ երբ իրար փարեն,
Ծա կը գամ քեզ մօտ ուրախ, գրկաքաց...»

«...Կերգեմ մինչ ի լուս,
Կերգեմ քեզ համար, դու իմ աչքի լուս...»

«Հայեացքիդ կարօտ
Մնամ ծնկաչոք մինչեւ առաւօտ...»

«Պատուհանիդ տակ
Մինչ մարին ինձ հետ ծայները յատակ...»

Հիւսիսի առաջ ստւերների պէս
Անցնում են մէկիկ պուրակ ու աղբիւր,
Մայիսեան օրեր եւ յուշեր անտես,
Անոգ մանկութեան երգեր ու համբոյր...

Ծրգի, համբոյրի թրթիռների հետ
Սահում են հնչիւն, լուսաւոր խոհեր.
Մինչ սէր անխմաստ կորչում է անհետ,
Աժոտ է վաշէն հսկա, անվեհեր...

Ու ե՞րբ էր... այն օր...

Ինչպէ՛ս ոգեշունչ ծայսեց իր վաշէն.

«Երգե՛ր նորանոր

Տանջած ամբոխի թող այստեղ հնչեն»...

Յիշում է Լիւսին ու այնպէ՛ս պայծառ

Մտքերը շարան գալիս են անծայր...

Ազդած վաշէից, այն վէ՛ս մտքերով,

Կապւեց ամբոխին նոր-կեանքի սիրով:

Թնդում է մէկից նւագը հզօր,

Առաջ են վազում գոյգեղը վայլսի...

Արբում են սիրով, արբում են անզօր—

Իրար գրկի մէջ վաշէ եւ Լիւսի:

III

Շքեղ վերջալոյս.

Հանգչում է հեգիկ արեւն աննման.
Ծրեկոն նորից իջնում է հանդարտ.
Քնքուշ թեւերով գիշերը ամրան
Հովի զարկերից խաղում է մարմանդ:

Նիրհել է ծովափ.

Դաժան մութի մէջ իջել է քարափ
Հագուր երկնքից՝ երազով մուշ-մուշ.
Ջրասուն բաղեր, ծայեր ու կարապ
Ննջում են ամրան հովերով անուշ,

Ծրագներ անդարձ...

Սար ու քար յանկարծ ցնցում են հիմքից,
Զարթնում են արագ՝ ճշող սուլոցով.

Եւ շոգեկառքի աշեր-կրակից

Փարատում է մութ, շողում է եւ ծով:

Հրէշն է վազում

Տարածամ մութին անուրջ երազում.

Երկաթուղիով հետււմ է, լաւիս,

Սարի փէշերից ճահիճ-աւազում

Վիշապի նման ստոյտ է տալիս...

Նիրհում են կրկին

Երկիր ու երկին մութի թեւերով.

Գիշեր ու անուրջ իջնում են հանդարտ.

Հեռու ծմակից սարի փէշերով

Զովաշունչ քամին սուլում է մարմանդ:

Մինչեւ արշալոյս, աչերը մարած,
Մազերը իջած հսկարտ ուներին,
Հոգին անուրջով սասնում է կամաց—
Նայում է վաչէն, կարօտ՝ իր եարին,
կարօտ՝ յուշերին...

—Երագի պէս
Հեզ ու հեզ—
Վճիտ աղբիւր,
Ծաղկի բոյր,
Գարուն օրեր
Ու հովեր,
Շողեր անմար
Անհամար,
Իմ կեանքի լոյս,
Արշալոյս,

Եկէ՛ք կրկին—
Անմեկին
Հոգիս ատէք
Եւ վառէք,
Ես Ձեր շնչով,
Ճաճանչով,
Երգեմ հալա՛րտ
Եւ անսլարտ...

Տարածամ երգի հնչուն ղողանջներ
Հովի թեւերով մարում են հանդարտ.
Վազո՞ւմ են, վազում ածղահա լեռներ.
Վաշէն է մութին մտորում անթարթ...

Գիւղական ազատ, անշուք յարկի տակ
Անցան իր անհոգ մանկութեան օրեր...
Այն վէս լեռներում կարկաչուն գետակ
Կանչում էր նրան ամենի ծորեր:

Յաւէտ նա թողեց եւ տուն հայրենի,
Քաղցրիկ ընկերներ, ծնող, քարեկամ.
Նկաւ մօտակա քաղաքն՝ ուսումի,
Իր հօր ցանկութեամբ, տխուր ու անկամ...

Շնչեց անծանօթ նորանոր յոյգեր,
Շողշողաց հարուստ ընատուր ծիրրով.
Կապեց ընկերին, վաստակեց նա սէր,
Սիրեց եւ Հիւսին մանուկ փափազով:

Սահեցին օրեր՝ պատանի հրով,
Բացեց անողորմ գոյութեան պայքար.
Դոյութեան կուի անթիւ ցաւերով
Թողեց եւ վաչէն մանկութեան աշխարհ...

Այսօր հայրենի նժոյգից անպարտ՝
Խլում է նրան քաւին սլնթաց,
Երկաթուղիով հետում է, լաւիս,
Դիւական քրքիջ հնչում է հաւարտ,
Հովիտ ու անտառ արծազանգ տալիս—
Վիշապն է ծորից վազում ճեպընթաց...

IV

Վաղորդեան մէջից թելերով նրբին
Փռում է հսկա քաղաքը նիրհած.
Արշալոյսի հետ ոսկեվառ արփին
Կապուտան ծովից շողում է կամաց:

Եւ քնաթաթախ աչերով անուշ
Յաւերժահարսեր, ելած ջրերից,
Երգերը սիրոյ, երգերը անյուշ
Արժակ կուրծերով հնչում են նորից:

Ջարթնում է ներվոտ եւ հսկա քաղաք,
Ելնում է ոտքի բիրաւոր շնչով.
Հազար շուրթերից հազար աղաղակ
Թնդում է առատ լոյսի ճաճանչով:

Ելէկտրաբարշէր—անսպառ ուժով,
Աւտօմօբիլի կանչեր անդադար.
Ձիարշաւ կառքեր, վառւած աշխուժով,
Անմիտ մրցումից առնում են դադար:

Ժխոր անիմաց, ծայներ խաժամուժ,
Զօրավիգ ամբոխ, գլուխների ծով.
Չուլի'ր Դու նրանց շարքերում, անուժ,
Տարւիր գերբնական ուժի հարւածով:

Ահա հեռանիստ թեւերով նրբին
Չգտւա՛ն է հսկա քաղաքը հզօր,
Գոռում ու գոչում մեծ-ծովի ափին,
Տարերք ու ժխոր իրար համազօր:

Եւ գործարաններ, ինչպէս աշտարակ
Առասպելական,
Հասել են ամպեր.
Միասաններով հրեղէն լափեր
Թանշում են արագ,
Քուլա ու քուլա ծխում հելիհել—
Դժոխքը իջած անշէջ հնոցում,
Որովայնի մէջ մեռաղ է ծծում.
Մշմշում է դել,
Հազար գլխանի վիշապը զարթած,
Երկինք ու երկիր, շէնքերը հիմքից
Դողում են նրա շոինդ-աղւուկից՝
Շնչերը պահած:

Եւ հազար բանտը, հազար բանտը կին
Լուսաշաղի հետ գալիս են շարան
Դէպի գործարան:

Բաղդից հալածւած, նրանք անմեկին,
Խոնաւ որջերում, հեռո՛ւ ամենքից,
Քամիւմ են միուր՝ արին քրտինքով.
Երկաթ բազուկներ ելած իրար քով,
Իրար կարեկից —

Թշառին միայն թշառն է սիրում —
Անյաղթ շարքերով գործարաններում
Նրա՛նք են ձուլում արծաթ ու ոսկի.
...Դարբնութ առաւօտ ազատ գարունքի:

Բանտը շարքերում, քշած կարիքից,
Երեք ժիգ տարի կարօտ իր եարին,
Հեռու անհամբոյր եւ հայրենիքից,
Նեպտուն քաղաքի հեռաւոր ծայրին

Ապրում է եւ նա,

Տարագիր վաչէն, լեռների որդին,
Իր նման հարիւր պանդուխտների հետ,
Հարի՛ւր ցաւերով կապւած իրար հետ:

Նրանք օրն ի քուն գործում են անա՞
Դժոխք-հնոցում.

Խաւար, մահաբոյր իանքերի ծոցում
Զլունգ են մխում երկաթ քաղովով.

Վիթխարի ուժից անիւը հսկա
Պտոյտ է գալիս որոտ-աղմուկով:

Անիւի առաջ մարդը անզգա
Դործիք է միայն.

Որպէս մեքենա՞ գործում է անձայն.

Ամեն շարժումին ուշադիր ծուլւած.

Եւ թէ տարաքաղդ շնչին մի վայրկեան
Մտքերով տարւի,

Անա մահաշունչ դիւակաւն հարւած,

Որ նա տոչորի,

Չեղջին յոյսերով, արեւան լծակում:

Եւ ծով արիւնի անիծեալ հանքով
Վաշէի առաջ, բոցերի միջից,
Ծարմանաւ է գեղ, աննման պատկեր...
Ժախտ է հոսում երկնային աշից,
Ջուզով են աշիկ սեւագիծ ունքեր.
Ծուխով ու մրով անցնում է մի բոյր,
Կենսատու եթեր վարդից անուշիկ.
Եւ վարդ շրթունքից խելացնոր համբոյր
Գգտւմ է նրան այնպէ՛ս քնքուշիկ...
Եւ կանչում է նա.

«Օ՛հ, Լիւսի՛, Լիւսի՛, սիրում եմ ես քեզ
«Իմ խենթ յոյզերի սիրով անսպառ.
«Պատանի սիրուց աւելի ուժեղ...
«Ես քե՛զ եմ սիրուէ՛մ, ղժոխքը վկա—
«Ունիմ պաշտելի մի սուրբ զաղափար,
«Վսեմ զաղափար՝ ծնւած տարերքից.
«Դու, ի՛մ քրմունի, հոգիս բորբոքի,
«Հրո՛վ մորմոքի, քեզ հետ, սրտակի՛ց,
«Երթանք ծնկաչոք մի նո՛ր աղօթքի...

Եւ Լիւսին
Սէզ լերան
Կատարին,
Իր ներքեւ
Խոր անդունդ
Սկսաւնած,
Դաւերի
Միրահար
Գիշերին
Դայլայլեց
Նուրբ ձայնով
Կանացի,
Առնական
Թոխչքով
Յօրինած,
Այն հզօր
Սերենադ
Մեղեդին.

—Շնչի՛ր, փոթորիկ, ես քեզ սիրեցի.
Անգուսպ քո թափով խլի՛ր իմ հոգին.
Եւ դուք, լեռնայոյզ, երգեր հողմավար,
Փարէ՛ք պատանուն, հնչէ՛ք սիրավառ...

Ուխտի եմ գալիս կարող սրբերի,
Իմ ազա՛տ արծիւ, քու նոր աղօթքով.
Հերի՛ք վշտահար հոգիս դեզերի,
Կանցնեմ սար ու ձոր ես բոքիկ ուրքով,
Եգամ պաշտելի սեղանիդ առաջ,
Կապիմ անբաժան զոգձաւոր մարդուն,
Ամոքեմ նրա եւ վիշտ եւ հառաչ,
Կուսական սիրով գիշերներ արթուն...

Շնչի՛ր, փոթորիկ, աւելի ուժեղ,
Դիւական հող՛ներ անգուսպ տարերքի.
Իմ ընտրած ուղին տարէ՛ք ինձ անշեղ,
Ելնեմ ծնկաշոր ես Նոր աղօթքի...

V

Մարեցին երգեր

Ամբոց քաղաքի լերան կատարին.

Ձկա՛ սարերի գեղանի փէրին,

Հովերի ընկեր,

Աննման Լիւսի—

Սիրասուն ծղնիկ ծաղիկ կանաչի,

Սիրահար սոխակ մայիսեան կանչի:

Ամպեր են գալիս,

Իջնում են խոնարհ, շօշափում կամաց,

Պատում են երկիր մթին-սեւամած,

Լալիս են, լալի՛ս...

Սողում են քնքուշ թեւերով՝ հեռուն,

Որոնում ի գուր տարագիր փէրուն:

Շնչում են հովեր,
Այնտեղ, նեպտունի հիւրասէր գրկում.
Լիաին ու վաշէն իրար են գրկում.
Էյ, անո՛ւշ օրեր,
Որ դուք կենսախինդ յոյզեր անարատ
Լցնում էք ծաղաւ սրտերը անջատ,
Ես ծե՛ղ եմ սիրում,
Ձեր շունչը յաւէտ նոր կեանք է յուզում.
Մղում է դէպի տենշալի գարուն,
Երբ երաններով խաղում է արին.

«Վաշէ՛, իմ սիրուն,
«Ես քոնն եմ այսօր,
«Ես քե՛զ եմ սիրում,
«Սիրուքդ եմ անգոր.
«Գրկի՛ր, օ՛, գրկի՛ր,
«Թող որ լարքենամ...
«Նոր հիմնը երգիր,
«Անվերջ ուլանամ
«Զո ջե՛ւմ յոյզերով,
«Զո վէս յոյզերով.

—Լիւսի, օ՛, Լիւսի,
իմ յոյս, աչքի լոյս,
Ծաւա՛ւ ես յոյզի—
Կերգեմ արշալոյս
Իր նուրբ շողերով,
իմ վա՛ռ Ատրուշան,
Որ ջիւջ շիթերով
Ցողում է շուշան.
Շիթերը անուշ
Փայլում են սէս-սէս,
Երկինքը՝ քնքուշ
Հագնում է ընճեզ:

Կերգեմ Ատրուշան,
Ոսկեծի՛ն արեւ,
Բոսոր երկունքի.
Անարատ Շուշան,
Տա՛նք սիրոյ ըարեւ,
Ելնինք աղօթքի...

Ճողփում են ջրեր կապուտան ծովի,
Սահում է անվախ վաշէի մակոյկ,
Ներգտունի ամից Լիւսին կորովի
Զարկում է ազատ թեւերով արոյգ:

Ենչում է նաւակ յուսարիւր հովիկ,
Անշեղ մօտենում դէպի նաւատակ,
Մինչ խորհրդաւոր ծփում են ալիք,
Ծփում է հանդարտ եւ ծով կապուտակ...

Ճողփում են թիւր զարկով միաւար,
Ժպտում է երկնից լուսին նազանքով,
Նրանց են հասնում զգփիւտ հուանքով
Ուսանող խմբի երգերը դաւար.

«Կապուտան ծովածիր ասիերին,
«Երբ իջնի երեկոն մթնշաղ,
«Հոլանի ջրահարս, կոյս փէրին
«Կը դիւթեն իրենց մօտ լուսաշաղ:

«Մարգարիտ ալեակներ ծափերով
«Կը զգին շուրթերով փափսուկ,
«Զովաշունչ կուրծերից արիերով
«Կը շրջէ թարմ հովիկ-ծովասիր:

«Ու ճայեր ջրերին կը սուրան,
«Հոգեվար կը հնչէ եւ կարապ,
«Մայթերից մարդկային կարաւան
«Շարէշար կը հոսէ դէպ ծովափ:

«Կը շողան լապտերներ լիառատ,
«Որ յիշեն վերջալոյս վաղանցիկ,
«Կը փարեն ջրերին անարատ
«Թրթիոներ լարաւոր երգեցիկ:

«Ակօրդներ վշտաբեկ եւ անյոյս
«Երբ հնչեն ծովափնեա նւագում,
«Սիրահար սլաւանիք մտայոյզ
«Յուսախար կը հանգչին նաւակում...

«Եւ կարաւ մինչ դիւթէ հոգեվար,
«Հնչիւններ տարածւին այն կղզին,
«Նաւորդներ մակոյկով թիավար
«Թող երթան աներկիւղ միասին...

«Նեպտունի լոյսերից մեկուսի,
«Գաղտնապահ հինաւորք ափերին,
«Ծով-եղկինք, նոր հիւրեր եւ կղզի
«Գիշերւան խորհրդի գոմարին...

Ելնում են զգոյշ, վաղորդեան ժամին,
Կապուտան ջրեր նիրհով դասալիք.
Դիական քրքիջ նշոտ է քամին,
Ծնում են անող յոյզերի ալիք...

...Եւ խորհրդաւոր յատակը ծովի
Հանում է հողմեր անէծք-նզովի.
Հանգած հրաքուխ շնչոտ է նորից,
Փրփուր է զալիս հոռու ափերից...

Ծովաշունչ քամին սուլում է վա-հո՛ւ,
Փոթորիկ թեւով հաքածում ուժեղ.
Անփորձ նաւաստիք հողմերից մահու
Ծովափ են դիմում ուղիով անշնդ...

Անլուր փոթորիկ՝ անյաղթ եզակի.
Թնդում է Նեպտուն թեւերով նրբին.
Երկնավառ հրդեհ՝ շանթեր կայծակի,
Գոչում են մարդիկ մեծ ծովի ափին:

Ամբոխը շարժում ալիքի նման,
Ալիքը մնչում աւելի հուժկու.
Ամբոխը ելած իր դէմ յանդիման,
Ոռնում է մթին ծովից ահարկու:

Կոհակ ու ամբոխ ձուլւած հարմենիկ,
Տարերք ու ժխոր իրար հախազօր.
Դարեւոր ափին ինններորդ ալիք
Հալւածում է խենթ, որտեղից հօօր...

Բանուկ փողոցի փլած շարքերով
Անցնում է լռի՜ն, վշտահար թափօր.
Ու քիւր հոգիներ մըմուռ վէրքերով
Կորուստն են ողբում քրոջ ու եղբօր...

Ծաղկով զարդարուն դափաղներ եկու
Տանում են նրանք ջլուտ ուսերին.
Իջել են խոնարհ աչերն անարկու...
Թաղո՛ւմ են այսօր ծովի զոհերին:

Եւ անա թմբին, թարմ հողի վրա,
Կանչում է մորեկք քանտորը հսկա.
Հառաչ է հնչում որոտի նման,
Պայթում է որոտ-հրաժեշտ թաղման.

«Ննջի՛ր, սիրասուն ընկեր ամհոռաց,
«Գուրգուրի՛ր նրան, նազելի քուրիկ.
«Արի՛ն է կաթում մեր սիրտը այրած,
«Դադարի՛ր մի պահ, իններորդ ալիք...

Արցունք է հոսում դաժան կուրծքից.
Ննջում են անդորր վաչէն եւ Լիւսին.
Խաւար շիրիմում, փոթորիկ օրից,
Գգում են իրար՝ յաւէտ միասին...

Ջնջում է քայլերդ մահից վշտահար...
Նիրհել են խաղաղ վաչէն եւ Լիւսին.
Անուշ հովերով, գարնան սիրահար,
Ծնջում են նորից ուրախ մայիսին:

Վ Ծ Ր Զ Ծ Ր Գ Ա Ն Զ

Այնտեղ, ուր ազատ լեռնասուն հովեր
Ենչում են համակ եթեր կենարար.
Այնտեղ, ուր հոգին սլանում է վեր,
Գեղանի կեանքեր սիրեցին իրար:

Հիսեցին անլուր մի սէր անմահ,
Մի սէր երկնային տենչերով անմար.
Անզուսպ տոգորած, քաղէի նման,
Ընկան վիրաւոր մեծ-կեանքի համար:

Ամեն նոր գարուն նրանց շիրիմին
Այցի են ելնում կորովի սրտեր,
Նրանց յուշերով փոթորիկ քամին
Ենչում է արդէն ցանկալի եթեր...

Եղէք հովե՛ր նորոգ կեանքի,
Գարնանափայլ երկունքի.
Հէյ-հէ՛յ օրեր, դալուկ հովեր,
Անցէք անյուշ, կարեւէր:


Իջէ՛ք սարից նրանց համար,
Անուշ հովե՛ր անհամար.
Ծթեր շնչով շոյէք կոյսին,
Հանգչին յաւերժ միասին:

Հէյ-հէ՛յ զարնան հովեր սիրուն,
Փարէք կոյսի մազերուն,
Իջէ՛ք, հովեր, դալո՛ւկ հովեր,
Անցէք անյուշ, կարեւէր...

Յունւար-Փետրւար 1915 թ.
Մօսկվա.

ՍԱՄԵԼ ՀՈՎԻԿ

Պ Օ Է Մ



Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Զ

Անուշ հովերով Ծաղկունք սարերից
Սահում են հեզիկ անուրջ ու գիշեր,
Մութի թեւերով իմ հոգում նորից
Ծնունդ են առնում վաղեմի յուշեր...

Հինատուրց վկա քաղցրիկ օրերի—
Յուշեր վեհաշունչ սիրոյ անարատ,
Որոնք անմոռաց ամեն նոր-տարի
Ծնչում են այնպէս յոյզերով առատ.

Յոյզերով առա՞տ, սիրով բոցավառ,
Եւ սէրն էր հսկա սարերի նման.
Աժդահա սիրով գիշեր ու խաւար
Ծրկնում են մի լոյս բոսոր, աննման...

Գարո՞ն աննման. երբ գիւ կարկաչով
Ժայռերին կայտառ զարկում են ալիք,
Հիւսերը փունջ-փունջ, ուրախ քրքիջով
Ալեաց կուրծերից կանչում են փերիք.

«Կապուտան ծովի ծաղկուն ափերին,
«Ծրբ լուռ երեկոն իջնի մթնշաղ,
«Հարսնեերից չքնաղ ծովածին փերին
«Կը դիւթէ իր մօտ մարմնով լուսաշաղ...

«Կարապը արդէն հնչեց հոգեվար,
«Վճիտ ակօրդներ հանգան միասին.
«Սիրոյ նաւորդներ, առոյգ, թիավար,
«Գաղտնապահ մութով սուրացէք կղզին:

Ամպն՝ը են հեռու ափերից վազում,
Սարի լանջերով իջնում են կամաց,
Ծրկիրը պատում մթին, սեւամած,
Հալիս են, լալիս. արի՛ւն է հոսում...
Ծրկնից վշտահար կանչում է երկիր.
Անգո՛ւսալ փոթորիկ, նոր հիմաը երգիր,
Որ ծաղիկ յոյսով, սիրահար զարնան,
Ազատ մայիսին նրանք արթնանան...

I

Աշո՛ւն է, աշո՛ւն.

Գնում են հեռու հաւքերը նախշուն...

Կանչում են հասուն խաղող ու խնձոր,

Անտառ, սար ու ծոր

Շողում են հազար հիւթալի մրգեր,

Այգում ու դաշտում հնչում են երգեր:

Ամպտուն սարեւից

Սարի ջրերով սնած շէն ու գիւղ,

Գիշերն, անեղիւղ,

Շարան ու շարան իջնում են նորից—

Անհոգ նիրհելու ծմբան ցրտի դէմ,

Հանգչեն խնդադէմ.

Օջախների շուրջ պատանի ու ծեր

Ջրոյց բոլորեն երգով լաղցրասէր:

Ամբողջ քաղաքում,
Ամբան վերջի հետ, կեանքն է աղմկում.
Գալիս են արդէն հեռացած խմբեր,
Սրտով անհամբեր
Ողջոյն են տալիս հայրենի շեմքին,
Քաղաքն էլ զւարթ հնչում է կրկին:

Երգ ու աղմուկով
Վարժարաններում նստած իրար քով
Դասի են եկել, կարօտ են լոյսին:

Վաշէն եւ Լիւսին
Նորից իրար մօտ, նայում են ժպտուն,
Ժպտում են նրանց սարերը Ամպտուն:

Օ դո՛ւք ժպիտներ անմեղ, մանկական,
Որ փայլ էք տալիս դէմքերին զւարթ,
Ինչպէս անարատ շուշան եւ ալ-վարդ,
Ձեր բոյրը անուշ սիրում եմ այնքա՛ն:

Բացէք թերթիկներ անթառամ ծաղկի,
Կարմիր թերթիկներ՝ անմահ գեղեցիկ.
Ձեր թարմ շնչի մէջ եւ սէր վաղանցիկ
Վսեմ յոյզերով թող յաւէտ ծաղկի:

Սահում են մանուկ օրերը անհաս,
Սահում են անդարձ թռչնի թեւերով.
Անցած օրերից, պատանի հրով,
Գալիս են սիրոյ ժամեր վաղահաս:

Բացում է կեանքի մի նոր արահետ
Սիրով տոգորւած սրտերի առաջ.
Ծնւում են մէկ-մէկ եւ վի՛շտ եւ հառա՛չ,
Անհոգ մանկութիւն սահում է անհետ:

Մանկուտ օրերից, սիրով աննկուն,
Կապւած է Վաչէն գեղանի կոյսին.
Նա այժմ, որպէս շրջմուլիկ լուսին,
Գալիս է հանդարտ ամեն իրիկուն,
Կանգնում սիրունու յգատուհանի մօտ,
Անչուն գիշերներ նւիրում նրան,
Սիրող զրկի մէջ մի նոր որդւան
Երագում է նա մինչեւ առաւօտ:

Բայց զուր Լիւսին սիրում է ամմար.
Հազիւ թէ նրանք հասնեն մութագի.
Որքան էլ ուզի Վաչէն երագի,
Հեռու է Լիւսին, անհաս իր համար:

Խնչո՞ւ սիրեցիր,

Անզո՛ւապ պատանի, քո սէրը անծիր

Քանի՞ փոթորիկ օրեր կը տեսնի...

Երնէկ թէ կարօտ իր եարին հասնի:

Գեղջո՛ւկ ես, թշւառ.

Գեանքը քեզ հա՛մար գիշեր է խաւար...

Խնչո՞ւ սիրեցիր.

Ան՛իտ դու վաշէ, Լիւսին մոռացի՛ր.

Նա հարուատ աղջիկ, դու նրանց օտար,

Դու այդպէս հեռու ի զուր մի՛ երթար:

Սիրեցիր Լիւսին...

Լիւսին էլ քեզ հետ տանջի՛ միասին,

Չեր սէրը, երնէկ, հասնի մուրազին.

Ու Լիւսին տխուր փակւած սենեակում
Հալիս է, լալի՜ս, եւ լուռ հեկեկում:

Առանց վաշէի անքա՛ղղ է Լիւսին,
Անքաղղ են անշուշտ նրանք միասին:

...ի գուր է, ի գուր... հերիք մորմորի.
Հարուստ է Լիւսին, ժառանգ մեւիքի.
Իսկ սիրուն վաշէն գեղջուկ շինական,
Հեռո՛ւ են նրանք վիհով ցեղական:

Հապա ինչ կասի մայրիկը անուս.
— Զէ, չէ՛, աղաթ չէ՛, դու իմ աչքի լուս,
Որ չէն օջախի աղջիկ գովական
Առնի մի քեասիք, այն էլ՝ շինական...

Ու նա վշտահար փակեած սենեակում,
Հալիս է, լալի՛ս, անվերջ հեկեկում...
Առանց վաշէի անքաղդ է Հիւսիս.
Անքաղդ են անշուշտ նրանց միասին:

...Ոհ անո՛ւշ երազ... պատուհանի դէմ
Այն ո՛վ է անթարթ նայում ժպտադէմ...

«Այդ դո՞ւես, վաշէ՛, իմ կեանք, իմ արեւ,
«Ցուա՛ դու անմար իմ հոգուս վերեւ:

«Ապրել չե՛մ կարող մի օր առանց քեզ,
«Կուզէի մէկից որ սիրտս պոկես,
«Առնես հոգուդ մէջ. պահես ջերմագին,
«Բուժի քո շնչով հիւա՞նդ իմ հոգին...

— Լիւսի, օ՛ Լիւսի, ինչպէ՞ս եմ սիրում
Աչերդ աստղեր, մութին շողացող,
Իմ յոյսն է վառում այդ ջինջ աչերում,
Իմ վիշտն է թափած շիթերդ ցօղ-ցօղ...

Գիշերը մենակ կերթամ մութ ծորակ,
Վտակը քովէս կը հոսէ արագ.
Ճակատս զգոյշ կը շոյէ զեփիւտ,
Կը տա ինձ քնքոյշ շուրթերիդ համբոյր:

Իմ հոգում, Լիւսի, դու վա՛ռ կը մնաս,
Քո սէրն է հրդեհ ժպտուն արշալոյս.
Բայ թէ մի վայրկեան դու ինձ մոռանաս,
Գիտցիր որ հանգա... իմ նո՛ւրբ վերջալոյս:

II

Ծաղկում է գարուն ծիլերով հազար,
 Զուգում են սէս-սէս դաշտեր ու արօտ.
 Շուշան, անմոռուկ, ծաղկունք լալազար
 Շնչում են անյագ եւ սէր ու կարօտ:

Գարնան շնչի հետ անուշ կարկաջով
 Զրերն ափերին տալիս են պաշիկ.
 Լերան բարձունքից ուրախ քրքիջով
 Հովիտ հն իջնում տղա ու աղջիկ:

Պէխ-աղբիւրի մօտ դալար կանաչում
 Կազմում են նրանք խմբական երգ-պար.
 Կաքաւում զարթ, գոչում են, կանչում,
 Նորանոր երգեր հնչո՛ւմ անսպառ...

«Աղբիւրի մօտ քեզ սիրեցի,
«Բոյիդ մատաղ աւ տղա.
«Զիռւ վրա արի անցի,
«Ոսկէմագոյ խաւ տղա:

«Ծարդ մենակ նստել սարին...
«Սարից լուանակ կը ցոլա.
«Կանչի՛, քլքոււ, գարկ շունգուրին,
«Ոսկէգանգուր ջա՛ն տղա:

—Սարի ջէյրան, իմ սիրելիս,
Ես քո քոյրով արբենամ.
Կրօքիդ վերան մի խաւ ունիս.
Կուրօքդ մարմար, զոյգ շամամ:

Սեւ աշերուդ ես մարեցա,
Տուր ինձ անուշ մի պաշիկ.
Եարս հինցաւ, եարս մոռցա,
Քեզ սիրեցի, ջա՛ն աղջիկ...

Անցաւ վառ գարուն,
Հանգաւ եւ ամառ, անցնում է աշուն.
Երկինքը կապոյտ ծածկել են ամպեր,
Հասել է ծմբան մի շունչ ցրտաքեր,
Եւ հեզահամբոյր
Զիւնի շերտերով երկիր համաափիւտ
Առնու՛մ է համբոյր:

Մարեցին նոյնպէս
Պէխ-աղբիւրի մօտ երգերը պէս-պէս.
Մարեցին հանդարտ զեփիւռ, անուշ հով.
Հանգչում է երկիր ծմեռւան նիրհով:

Դաժան ցրտերին
Վրա է հասնում քնքուշ նոր տարին.
Ուրախ են մարդիկ, հոսում են օրեր...
Տարին, երանի, այսպէս բոլորէր:

Ամբողջ քաղաքի կոկիկ դահլիճում
նւագածութեան ծայներ են հնչում:
Զւարթ հանդիպում գալիք նոր-տարուն,
Մանուկ նոր-տարին նայո՞ւմ է սիրուն:
Գալիս են շտապ մարդիկ անհամար,
Հաճոյքի օրեր հարուստի համար:
Ազնիւ մետաքսէ փարթամ հագուստով
Դահլիճ են մտնում նրանք անվրդով,
Զուգւած ակներով, օղերն աղամանդ,
Փղոսկրէ հովհաբ հովում է մարմանդ:
Դահլիճ է մտնում Լիւսին աննման—
Երկրպագունք ուղեկից նրան,
— Օհ մեր դիցունին չքնաղ է, համեստ,
Զօնում են կոյսին հազար մի գովեստ.
Հոգեղէն հրեշտակ, զոհար է անգին.
Կարօտ են իր մի քնքոյշ հայեացքին...

Իսկ Լիւսին հեռու

Փնտրում է միայն իր Վաչէն ուրու...

—Ա՛խ ո՛ւր է Վաչէն, ինչո՞ւ նա չկա.
Անփոյթ է նա միշտ, անսէ՛ր, անզգա:
Նա ինձ չի՛ սիրում...

Հասա էլ ինչո՞ւ Պէխի-աղբիւրում
Ծրդում էր ինձնով, նայում էր խելառ,
Ծրք բաժանեցինք՝ այնպէս խղճահար
Հեռացաւ մոլար:

Ահա եւ Վաչէն...

Փողերն աւելի ուժգին թող հնչեն:

Զէ, չէ՛, հնար չէ՛,

Լիւսին իր սիրուց ինչո՞ւ ամաչէ.

Սիրո՞ւմ է նրան.

Գուգեն բամբասեն, թող խօսեն վրան...

Թնդում է հզօր նւագը մէկից,
Առաջ են վազում զոյգերը վայլսի.
Արքում են սլարով, արքում նւագից,
Իրար գրկի մէջ վաշէ եւ Լիւսի...

Խաղում է արիւն նրանց երակում,
Զուլւում են ինչպէս անբաժան մարմին.
Հնչիւնների հետ սրտիկն է երգում
Այրած շուրթերից գիշերւա ժամին:

Գիշերը խաղաղ եւ երանաւէտ
Հնչում է դիւթիշ մինչեւ իսկ հիմա...
Վաշէի ձօնած երգերում, յաւէտ,
Սիրավառ Լիւսին ապրում է ամմահ...

Յիշում է երգերն ընծայած իրեն,
Յիշում է անկապ, ուղեղով արքած:

«...Գիշեր ու անուրջ երբ իրար փարեն,
Ծա կը գամ քեզ մօտ ուրախ, գրկաքաց...»

«...Կերգեմ մինչ ի լուս,
Կերգեմ քեզ համար, դու իմ աչքի լուս...»

«Հայեացքիդ կարօտ
Մնամ ծնկաչոք մինչեւ առաւօտ»...

«Պատուհանիդ տակ
Մինչ մարին ինձ հետ ծայները յատակ...»

Լիւսիի առաջ ստւերների պէս
Անցնում են մէկիկ պուրակ ու աղբիւր,
Մայիսեան օրեր եւ յուշեր անտես,
Անհոգ մանկութեան երգեր ու համբոյր...

Ծրգի, համբոյրի թրթիռների հետ
Սահում են հնչիւն, լուսաւոր խոհեր,
Մինչ սէր անխմաստ կորչում է անհետ,
Աժոտ է վաշէն հսկա, անվեհեր...

Ու ե՞րբ էր... այն օր...
Ինչպե՛ս ոգեշունչ ծայնեց իր վաշէն.

«Երգե՛ր նորանոր
Տանջւած ամբոխի թող այստեղ հնչեն»...

Յիշում է Լիւսին ու այնպե՛ս պայծառ
Մտքերը շարան գալիս են անծայր...
Ազդւած վաշէից, այն վե՛ս մտքերով,
Կապւեց ամբոխին նոր-կեանքի սիրով:

Թնդում է մէկից նւագը հզօր,
Առաջ են վազում զոյգերը վայլսի...
Արքում են սիրով, արքում են անզօր—
Իրար գրկի մէջ վաշէ եւ Լիւսի:

III

Շքեղ վերջալոյս.

Հանգչում է հեզիկ արեւն աննման.

Ծրեկոն նորից իջնում է հանդարտ.

Քնքուշ թեւերով գիշերը ամրան

Հովի գարկերից խաղում է մարմանդ:

Նիրհել է ծովափ.

Դաժան մութի մէջ իջել է քարափ

Հագուր երկնքից՝ երազով մուշ-մուշ.

Ջրասուն բաղեր, ժայեր ու կարապ

Ննջում են ամրան հովերով անուշ,

Ծրագներ անդարձ...

Սար ու քար յանկարծ ցնցում են հիմքից,
Զարթնում են արագ՝ ճշող սուղոցով:

Եւ շոգեկառքի աշեր-կրակից

Փարատում է մութ, շողում է եւ ծով:

Հրէշն է վազում

Տարածում մութին անուրջ երազում.

Երկաթուղիով հետււմ է, լալիս,

Սարի փէշերից ճահիճ-աւազում

Վիշապի նման պտոյտ է տալիս...

Նիրհում են կրկին

Երկիր ու երկին մութի թեւերով.

Գիշեր ու անուրջ իջնում են հանդարտ.

Հեռու ծմակից սարի փէշերով

Զովաշունչ քամին սուլում է մարմանդ:

Մինչեւ արշալոյս, աչերը մարած,
Մազերը իջած հաւարտ ուներին,
Հոգին անուրջով սահում է կամաց—
Նայում է վաչէն, կարօտ՝ իր եարին,
կարօտ՝ յուշերին...

—Երագի պէս
Հեզ ու հեզ—
Վճիտ աղբիւր,
Ծաղկի քոյր,
Գարուն օրեր
Ու հովեր,
Շողեր անմար
Անհամար,
Իմ կեանքի լոյս,
Արշալոյս,

Ծկէ՛ք կրկին—
Անմեկին
Հոգիս ատէք
Եւ վառէք,
Ես Ձեր շնչով,
Ճաճանչով,
Ծրգեմ հաւա՛րտ
Եւ անսպարտ...

Տարածամ երգի հնչուն ղողանջներ
Հովի թեւերով մարում են հանդարտ-
վազում են, վազում աժդահա լեռներ.
Վաչէն է մութին մտորում անթարթ...

Գիւղական ազատ, անշուք յարկի տակ
Անյան իր անհոգ մանկութեան օրեր...
Այն վէս լեռներում կարկաչուն գետակ
Կանչում էր նրան ամենի ծորեր:

Յաւէտ նա թողեց եւ տուն հայրենի,
Քաղցրիկ ընկերներ, ծնող, բարեկամ.
Եկաւ մօտակա քաղաքն՝ ուսումի,
Իր հօր ցանկութեամբ, տխուր ու անկամ...

Ենչեց անծանօթ նորանոր յոյզեր,
Շողշողաց հարուստ բնատուր ծիրքով.
Կապեց ընկերին, վաստակեց նա սէր,
Միւրեց եւ Լիւսին մանուկ փափագով:

Սահեցին օրեր՝ պատանի հրով,
Բացեց անողորմ գոյութեան պայքար.
Գոյութեան կուի անթիւ ցաւերով
Թողեց եւ վաչէն մանկութեան աշխարհ...

Այսօր հայրենի նժոյգից անպարտ՝
Խլում է նրան քամին սլւնթաց,
Ծրկաթուղիով հետում է, լաւիս,
Դիական քրքիջ հնչում է հպարտ,
Հովիտ ու անտառ արծազանգ տալիս—
Վիշապն է ձորից վազում ճեպւնթաց...

IV

Վաղորդեան մէջից թելերով նրբին
Փռում է հսկա քաղաքը նիրհած.
Արշալոյսի հետ ոսկեվառ արփին
Կապուտան ծովից շողում է կամաց:

Եւ քնաթաթախ աչերով անուշ
Յաւերժահարսեր, ելած ջրերից,
Երգերը սիրոյ, երգերը անյուշ
Արծակ կուրծերով հնչում են նորից:

Ջարթնում է ներվոտ եւ հսկա քաղաք,
Ելնում է ոտքի քիւրաւոր շնչով.
Հազար շուրթերից հազար աղաղակ
Թնդում է առատ լոյսի ժաճանչով:

Ելէկտրաքարշե՛ր—անսպառ ուժով,
Ատոմօքիլի կանչեր անդադար.
Չիարշաւ կառքեր, վառւած աշխուժով,
Անմիտ մրցումից առնում են դադար:

Ժխոր անիմաց, ծայներ խաժամուժ,
Զօրավիգ ամբոխ, գլուխների ծով.
Չուլի՛ր Դու նրանց շարքերում, անուժ,
Տարւիր գերբնական ուժի հարւածով:

Ահա հեռանիստ թելերով նրբին
Զգում է հսկա քաղաքը հզօր,
Գոռում ու գոչում մեծ-ծովի ափին,
Տարերք ու ժխոր իրար համազօր:

Եւ գործարաններ, ինչպէս աշտարակ
Առասպելական,
Հասել են ամպեր.
Ծխահամներով հրեղէն լափեր
Թանջում են արագ,
Քուլա ու քուլա ծխում հելինե—
Դժոխքը իջած անշէջ հնոցում,
Որովայնի մէջ մեռաղ է ծծում.
Մշմշում է դեւ,
Հազար գլխանի վիշապը զարթած,
Երկինք ու երկիր, շէնքերը հիմքից
Դողում են նրա շոինդ-աղմուկից՝
Շնչերը պահած:

Եւ հազար քանուր, հազար քանուր կին
Հուսաշաղի հետ գալիս են շարան
Դէպի գործարան:

Բաղդից հալածւած, Նրանք անմեկին,
Խոնաւ որջերում, հեռո՛ւ ամենքից,
Քամում են միւր՝ արիւն քրտինքով,
Ծրկաթ բազումներ ելած իրար քով,
Իրար կարեկից—
Թշւառին միայն թշւառն է սիրում—
Անյաղթ շարքերով գործարաններում
Նրա՛նք են ձուլում արծաթ ու ոսկի.
...Դարբնում առաւօտ ազատ գարունքի:

Բանւոր շարքերում, քշած կարիքից,
Երեք ձիգ տարի կարօտ իր եարին,
Հեռու անհամբոյր եւ հայրենիքից,
Նեպտուն քաղաքի հեռաւոր ծայրին
 Դալքում է եւ նա,
Տարագիր վաշէն, լեռների որդին,
Իր նման հարիւր պանդուխտների հետ,
Հարի՛ւր ցաւերով կապւած իրար հետ:

Նրանք օրն ի զուն գործում են անա՞
Դժոխք-հնոցում.

Խաւար, մահաբոյր հանքերի ծոցում
Քլունգ են մխում երկաթ քազուկով.

Վիթխարի ուժից անխը հսկա
Պտոյտ է գալիս որոտ-աղմուկով:

Անիւի առաջ մարդը անզգա
Դործիք է միայն.

Որպէս մեքենա՞ գործում է անծայն.

Ամեն շարժումին ուշադիր ծուլւած.

Եւ թէ տարաբաղդ շնչին մի վայրկեան
Մտքերով տարւի,

Ան մահաշունչ դիւակաւն հարւած,

Որ նա տոշորի,

Չեղջին յոյսերով, արեւան լծակում:

Եւ ծով արիւնի անիծեալ հանքում
Վաշէի առաջ, բոցերի միջից,
Մարմնանում է գեղ, աննման պատկեր...
Ժպիտ է հոսում երկնային աչից,
Ջուգում են աչիկ սեւագիծ ունքեր.
Ծուխով ու մրով անցնում է մի բոյր,
Կենսատու եթեր վարդից անուշիկ.
Եւ վարդ չրթունքից խելացնոր համբոյր
Գգտւմ է նրան այնպէ՛ս քնքուշիկ...
Եւ կանչում է նա.

«Օ՛հ, Լիւսի՛, Լիւսի՛, սիրում եմ ես քեզ
«Իմ խննթ յոյզերի սիրով անսպառ.
«Պատանի սիրուց աւելի ուժեղ...
«Ես քե՛զ եմ սիրու՛մ, դժոխքը վկա—
«Ունիմ պաշտելի մի սուրբ գաղափար,
«Վսեմ գաղափար՝ ծնւած տարերքից.
«Դու, ի՛մ քրմունի, հոգիս բորբոքի,
«Հրո՛վ մորմոքի, քեզ հետ, սրտակի՛ց,
«Երթանք ծնկաչոք մի նո՛ր աղօթքի...

Եւ Լիւսին
Սէգ լերան
Կատարին,
Իր ներքեւ
Խոր անդունդ
Սեւամած,
Դաւերի
Սիրահար
Դիշերին
Դայլայլեց
Նուրբ ձայնով
Կանացի,
Առնական
Թոխչքով
Յօրինած,
Այն հզօր
Սերենադ
Մեղեդին.

— Ենչի՛ր, փոթորիկ, ես քեզ սիրեցի.
Անգուստ քո թափով խլի՛ր իմ հոգին.
Եւ դուք, լեռնայոյզ, երգեր հողմաւար,
Փարէ՛ք պատանուն, հնչէ՛ք սիրաւատ...

Ուխտի եմ գալիս կարող սրբերի,
Իմ ազա՛տ արծիւ, քու նոր աղօթքով.
Հերի՛ք վշտահար հոգիս դեզերի,
Կանցնեմ սար ու ծոր ես քոքիկ ուրբով,
Կգամ պաշտելի սեղանիդ առաջ,
Կապւիմ անբաժան գործատր մարդուն,
Ամոքեմ նրա եւ վիշտ եւ հառաչ,
Կուսական սիրով գիշերներ արթուն...

Ենչի՛ր, փոթորիկ, աւելի ուժեղ,
Դիւական հողմեր անգուստ տարերքի.
Իմ քնտրած ուղին տարէ՛ք ինձ անշեղ,
Ելնեմ ծնկաշոր ես նոր աղօթքի...

V

Մարեցի՛ն երգեր

Ամբոց քաղաքի լերան կատարին.

Զկա՛ սարերի գեղանի փէրին,

Հովերի ընկեր,

Աննման Լիւսի—

Սիրասուն ծղնիկ ծաղիկ կանաչի,

Սիրահար սփռակ մայիսեան կանչի:

Ամպեր են գալիս,

Իջնում են խոնարհ, շօշափում կամաց,

Պատում են երկիր մթին-սևամաժ,

Լալիս են, լալի՛ս...

Սողում են քնքուշ թևերով՝ հոռուն,

Որոնում ի գուր տարագիր փէրուն:

Ծնշում են հովեր,
Այնտեղ, նեպտունի հիւրասէր գրկում.
Լիաին ու վաշէն իրար են գրկում.
Էյ, անո՛ւշ օրեր,
Որ դուք կենսախինդ յոյզեր անարատ
Լցնում էք ծաղաւ սրտերը անջատ,
Ծս ծե՛ղ եմ սիրում,
Ձեր շունչը յաւէտ նոր կեանք է յուզում.
Մղում է դէպի տենչալի գարուն,
Ծրք երաններով խաղում է արին.

«Վաշէ՛, իմ սիրուն,
«Ծս քոնն եմ այսօր,
«Ծս քե՛զ եմ սիրում,
«Սիրուցդ եմ անգօր.
«Գրկի՛ր, օ՛, գրկի՛ր,
«Թող որ արթնամ...
«Նոր հիմնը երգիր,
«Անվերջ սլանամ
«Զո ջե՛տի յոյզերով,
«Զո վէս յոյզերով.

—Լիւսի, օ՛, Լիւսի,
իմ յոյս, աչքի լոյս,
Ծաքա՛ւ ես յոյզի—
Կերգեմ արշալոյս
Իր նուրբ շողերով,
իմ վա՛ռ Ատրուշան,
Որ ջինջ շիթերով
Ցօղում է շուշան.
Շիթերը անուշ
Փայլում են սէս-սէս,
Երկինքը՝ քնքուշ
Հագնում է բնեղ:

Կերգեմ Ատրուշան,
Ոսկեծին արեւ,
Բոսոր երկունքի.
Անարատ Շուշան,
Տա՛նք սիրոյ քարեւ,
Ելնենք աղօթքի...

Ճողփում են ջրեր կապուտան ծովի,
Սահում է անվախ վաշէի մակոյկ.
Նեպտունի ափից Լիւսըն կորովի
Ջարկում է ազատ թռւնքով առոյգ:

Ենչում է նաւակ յուսարիք հովիկ,
Անշեղ մօտենում դէպի նաւատակ.
Մինչ խորհրդատու ծփում են ալիք,
Ծփում է հանդարտ եւ ծով կապուտակ...

Ճողփում են թիւը զարկով միաւար,
Ժպտում է երկնից լուսին նազանքով.
Նրանց են հասնում զեփիւտ հոսանքով
Ուսանող խմբի երգերը դաւար.

«Կապուտան ծովածիր ասիերին,
«Երբ իջնի երեկոն մթնշաղ,
«Հոլանի ջրահարս, կոյս փէրին
«Կը դիւթեն իրենց մօտ լուսաշաղ:

«Մարգարիտ ալիակներ ծափերով
«Կը գգւին շուրթերով փսփսով,
«Ջովաշունչ կուրծերից արիերով
«Կը շրջէ թարմ հովիկ-ծովասիւր:

«Ու ծայեր ջրերին կը սուրան,
«Հոգեվար կը հնչէ եւ կարապ,
«Մայթերից մարդկային կարաւան
«Շարէշար կը հոսէ դէպ ծովափ:

«Կը շողան լապտերներ լիառատ,
«Որ յիշեն վերջաւոյս վաղանցիկ,
«Կը փարեն ջրերին անարատ
«Թրթիոներ լարաւոր երգեցիկ:

«Ակօրդներ վշտաբեկ եւ անյոյս
«Երբ հնչեն ծովափնեա նւագում,
«Սիրահար սլառանիք մտայոյզ
«Յուսախար կը հանգչին նաւակում...

«Եւ կարաւ մինչ դիւթէ հոգեվար,
«Հնչիւններ տարածին այն կղզին,
«Նաւորդներ մակոյկով թիավար
«Թող երթան աներկիւղ միասին...

«Նեպտունի լոյսերից մեկուսի,
«Գաղտնապահ հինաւուրց ափերին,
«Ծով-երկինք, նոր հիւրեր եւ կղզի
«Գիշերւան խորհրդի գումարին...

Ելնում են զգոյշ, վաղորդեան ժամին,
Կապուտան ջրեր նիրհով դասալիք.
Դիական քրքիջ հնչում է քամին,
Ծնւում են անեղ յոյզերի ալիք...

...Եւ խորհրդաւոր յատակը ծովի
Հանում է հողմեր անէծք-նզովի.
Հանգած հրաքուխ շնչում է նորից,
Փրփուր է զալիս հեռո՛ւ ափերից...

Ծովաշունչ քամին սուլում է վա-հո՛ւ,
Փոթորիկ թեւով հարւածում ուժեղ.
Անփորձ նաւաստիք հողմերից մահու
Ծովափ են դիմում ուղիով անշեղ...

Անլուր փոթորիկ՝ անյաղթ եզակի,
Թնդում է նեպտուն թեւերով նրբին,
Երկնավառ հրդեհ՝ շանթեր կայծակի,
Գոչում են մարդիկ մեծ ծովի ափին:

Ամբոխը շարժում ալիքի նման,
Ալիքը մնչում աւելի հուժկու,
Ամբոխը ելած իր դէմ յանդիման,
Ոռնում է մթին ծովից ահարկու:

Կոհակ ու ամբոխ ձուլւած հարմոնիկ,
Տարերք ու ժխոր իրար համագոր,
Դարեւոր ափին իններորդ ալիք
Հարւածում է խենթ, որտեղից հզոր...

Բանուկ փողոցի փլամ շարքերով
Անցնում է լոխ՝ն, վշտահար թափօր.
Ու քիւր հոգիներ մրմուռ վէրքերով
Կորուստն են ողբում քրոջ ու եղբօր...

Ծաղկով զարդարուն դազադներ ելկու
Տանում են նրանք ջլուտ ուսերին,
Իջել են խոնարհ աչերն անարկու...
Թաղո՛ւմ են այսօր ծովի զոհերին:

Եւ անա թմբին, թարմ հողի վրա,
Կանչում է մորեղք քանւորը հսկա.
Հառաչ է հնչում որոտի նման,
Պայթում է որոտ-հրաժեշտ թաղման.

«Ննջի՛ր, սիրասուն ընկեր անմոռաց.
«Գուրգուրիւ նրան, նազելի քուրիկ.
«Արիւն է կաթում մեր սիրտը այրած,
«Դադարի՛ր մի պահ, իններորդ ալիք...

Արցունք է հոսում դաժան կուրծքից.
Ննջում են անդորր Վաչէն եւ Լիւսին.
Խաւար շիրիմում, փոթորիկ օրից,
Գգւում են իրար՝ յաւէտ միասին...

Հնչում է քայլերդ մահից վշտահար...
Նիրհել են խաղաղ Վաչէն եւ Լիւսին.
Անուշ հովերով, գարնան սիրահար,
Ծնչում են նորից ուրախ մայիսին:

Վ Ե Ր Զ Ե Ր Գ Ա Ն Զ

Այնտեղ, ուր ազատ լեռնասուն հովեր
Ենչում են համակ եթեր կենարար.
Այնտեղ, ուր հոգին սլանում է վեր,
Գեղանի կեանքեր սիրեցին իրար:

Հիանցին անլուր մի սէր անմահ,
Մի սէր երկնային տենչերով անմար.
Անզուսպ տոգորւած, քաղէի նման,
Ըսկան վիրատր մեծ-կեանքի համար:

Ամեն նոր զարուն նրանց շիրիմին
Այցի են ելնում կորովի սրտեր,
Նրանց յուշերով փոթորիկ քամին
Ենչում է արդէն ցանկալի եթեր...

Եղէք հովե՛ր նորոգ կեանքի,
Գարնանափայլ երկունքի.
Հէյ-հէ՛յ օրեր, դալուկ հովեր,
Անցէք անյուշ, կարեւելք:

Իջէ՛ք սարից նրանց համար,
Անուշ հովե՛ր անհամար.
Եթեր շնչով շոյէք կոյսին,
Հանգչին յաւերժ միասին:

Հէյ-հէ՛յ գարնան հովեր սիրուն,
Փարէք կոյսի մազերուն,
Իջէ՛ք, հովեր, դալո՛ւկ հովեր,
Անցէք անյուշ, կարեւելք...

Յունւար-Փետրւար 1915 թ.
Մօսկվա.

ՍԱՄԷԼ ՀՈՎԻԿ

Գ Օ Է Մ

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Զ.

Բիւրակ սարերի հովասուն գրկում,
Հէքիաթ-Եղէմի շնչով սիրաւէտ,
Երբ պոյտ անթառաւ, շուշանն էր ծաղկում
Համեստ մանուշակ քուրով էր յաւէտ,
Գոհար ակնների քիւրեղ շիթերով
Փրփուր էր թքում արծաթէ ջրվէժ—
Կարօտած եարին մարմանդ գիշերով
Վտակը ծորից կանչում էր վիշ-վէ՛շ...

Սամէլ հովտէին ելաւ քաղցրածայն,
Սարի փէրինե՛ր, զո՛ւք չը խոովիք,
Զեր թովչանքների օրերը անցան,
Գարուն ու համբոյր քերում է հովիկ:

Լսո՞ւմ էք, չրե՞ր, կացե՛ք, մի՛ փախչիք,
Մթին ամպերից իջել է առջիկ.
Աչերը արեւ, կուսական հրով
Սյրի մեր հոգին... գա հազա՛ր քարով...

Ժայռեր ու քարափ, ամենի սեւ ծոր,
Արքէք հովուհու երգով սիրածոր.

«Ողջոյն քեզ, Բիւրա՛կ, ողջոյն ձեզ, սարե՛ր
• իջէք սարերից էյ անո՞ւշ հովեր.
• Երնէկ թէ, այսպէս, ամեն մի գարուն
• Շնչեմ ձեր կարկաշ լանջերին սիրուն...

Լռում է գետակ, դարեւոր ջրվէժ
Ու չի շառաչում սարից գահավէժ.
Կարապ ու լճակ, ուռիներ, քամին
Ննջում են մարմանդ գիշերւա ժա՛փն:

Եւ երբ հովուհին վշտահար աչով
Անցնում է սիրած հովւի առաջով,
Իջնում են եթեր-յաւերժահարսեր,—
Շուրթերը կարմիր, ծփում են վարսեր,—
Խաբուսիկ սիրոյ անուրջ-երազում
Հուժուժկին թովիչ երգեր են ասում.

«Եյսօր, անշուշտ, դու կտեսնես

«Բացւած կուրծքը քո եարի.

«Ծարիդ կըքով պինդ կսեղմես,

«Նա էլ քեզ հետ կը մարի...

Շրկշնկում է գեփիւռ քամին,

Շնչում է զով, անուշ հով.

Երազներում հէգ պատանին

Մըմնչում է խոր նիրհով:

Միգանուշներ թող սնարին
Իջնեն հանդարտ շոյելով.
Մոռացութեան նուրբ թեւերով
Փարեն յաւէտ իր եարին:

Ա.

Ծփրատի ափին, հեռաւոր երկրում,
Հին-հին օրերից ծերուկ էր ապրում:

Անշուք, գետնափոր խորշում, առանձին,
Նա քաշ էր տալիս մի կեանք հողածին.
Մի կեանք, որ մահից, անշուշտ, սիրելի...
Կեանքը ծերունու՝ զրկանքներով է:

Թափած քրտինքից, արին արցունքով—
Ծփում էր արդէն կարիքի մի ծով...

Հաւերի կանչով նա լուսարացին,
Շալակը առած փայտեր ու կացին,
Յոգնած քայլերով եւ կամաց-կամաց
Քաղաք էր իջնում՝ իր գիւղի դիմաց. —

Փայտից գոյացած մի քանի կօւէկ
Հազիւ գուրգուրէր ծեր կեանքը քեկ-քեկ:

Բայց նա դժգոհ չէր. ննդլիկ խրճիթում
Չորցած մատներով այծիկն էր կլթում:

Ունէր թոնիրին լոկ հին խաչերկաթ...

Գարեհացի հետ թատում մի քիչ կաթ —
Պարէնն էր օրւա, տարին շուրջ քուր,
Ծրեր աղջկա եւ ծերունի հօր:

Ու այդպէս օրերն, ամիսներ, տարին
Սահում էին միշտ անյոյս խաւարով:

Ծերուկը մի օր իր ջահէշներին
Չայնից մտախոհ, դողդոջ շուրթերով.

«Նայէք ձեր շուրջ, դէպի լեռներ,

«Իմ քաղիկներ սիրասուն,

«Տեսէք որքան ուլիկ-գառներ,

«Այժ ու ոչխար-անասուն

«Ոստոստում են համարձակ,

«Արօտներում լայնարձակ:

«Իսկ դուք մեր կառ, միակ այծին,

«Գիշերներով, օրն ի քուն,

«Փակել էք նեղ, խոնամ, մթին,

«Կեղտոտ գոմում՝ հաւարուն:

Մեծ քոյրն ու միջակն, երկուան էլ տգեղ,
Ձուգեցին լսել հայրական խօսքին.
Չարախօս հոգով, երկուան էլ սրտնեղ,
Այսպէս գոչեցին թշուառ ծերուկին.

«Ի՞նչ է աստուհ, քա վոյ, տոման,
«Այդ քո քոստոտ կենդանուն
«Գոմից հանենք ու մշտական
«Ելնենք սարեր քարքարոտ,
«Ջահել կեանքում մեր կուտական
«Մնանք հացի միշտ կարօտ:
«Մենք էլ գիտենք դու մեզ համար
«Բերել ես զարդ գեղեցիկ.
«Նոր ոտնաման, ոսկէ քեամար,
«Ասեղ, ուլունք թափանցիկ...

—Ծս կը տանեմ, քաղցրի՛կ բարա,
Բեր ինձ, միայն, մի զդակ,
Մի զոյգ տրեխ, քրդէ կապա,
Կաղնուց երկար կուռ մահակ,
Եւ սի սրինգ:

Կանչեց սիրով կրտսեր ղստրիկ:

Հայրն էլ սկաշեց զոյգ աշիկներ,
Այն զոյգ խոհուն լճակներ:

Հոյսի հետ քաղաք զնաց ծերունին.
Առաւ թելերից հիւսւած նոր գդակ.
Կաշւէ զոյգ տրեխ, թաղքէ կապա հին,
Մահակը—կաղնուց քորեց կոնատակ:

— Զէ՛, չե՛մ տանի.

Ասաց իր հօր
Սա՛մէլ աղջիկ պատանի:

« Զէ՛ խոստացար առաջին օր,

« Որ դուրս տանես այծիկին.

« Այժմ ինչո՞ւ դու նորանոր

« Ղրղղովոս՝ ոս իմ հոգին:

— Ների՛ր, ծնող, մի՛ նեղանա,

Եղջիկը կոյս, մեն-մենակ,

Առանց սրինգ ինչպէ՛ս գնա

Սարերը խուլ, անքնակ:

Զաղար գնաց ծերը կրկին,

Դուստ սրինգ գեղեցիկ.

Բերեց Սա՛մէլ նոր հովիւիկին—

Իր աղջկան երգեցիկ:

Աղջիկն ու այծիկ

Ու Մարչան շնիկ սարերն բարձրացան:

Սարի փէրինե՛ր, դուք չը խոտփիք.

Ձեր թոճաւնքների օրերը անցան,

Գալիս է Սառէլ—լեռնասուն հովիւիկ:

Ելել է երկնի մթին ամպերից,

Իջել է մեզ մօտ չքնաղ սարերում.

Յաւէտ անծանօթ, հեռու աշխարհից

Նոր կեանք ու արեւ, գարուն է քերում:

Բուրում է անտառ, քուրում է եթեր,

Երկիր շուրջ բոլոր՝ շողում են վարդեր.

Ըմպեր ու երկին, փէրիք, սար ու ծոր

Թնդում են կոյսի երգով քաղցրածոր:

«Օրը մթնեց. ամբողջ երկիր
«Խորասուզեց խաւարում.
«Կաղւիկ ի՛մ այծ, ինձ մօտ պառկիր,
«Իսկ դու, շնիկ, խոտերում:

«Ննջենք այսօր մաքուր օդում,
«Մարի լանջին քարքարոտ.
«Պայծառ աստղեր երկնուց խնդում,
«Յոլում են սէր ու կարօտ:

«Երկինքը մեզ լինի վերմակ.
«Ու՛ կոշտ քարեր քարծի տեղ.
«Թուղպեր չկան, միայն ծերմակ
«Փոքրիկ ամպիկ կա այնտեղ...

«Օրը մթնեց. ամբողջ երկիր
«Խորասուզեց խաւարում.
«Կաղնիկ իմ այծ, ինձ մօտ պառկիր,
«Իսկ դու, շնիկ, խոտերում:

«Ննջենք այսօր մաքուր օդում,
«Մարի լանջին քարքարոտ.
«Պայծառ աստղեր երկնուց խնդում,
«Յոլում են սէր ու կարօտ:

«Երկինքը մեզ լինի վերմակ.
«Ու՛ կոշտ քարեր քարծի տեղ.
«Թուղպեր չկան, միայն ծերմակ
«Փոքրիկ ամպիկ կա այնտեղ...

Խաղաղ գիշերին, հովերի գրկում,
ննչեց նա անյուշ.
Ջեփիտը օրօ՞ր, մեղմաշունչ երգում,
Եղյում էր անուշ:
Այծիկն էլ, յոգնած, մուշ-մուշ էր անում.
Ու միայն Մարջան շնիկն էր արթուն...

Երազների հետ, մեղմահոս քնում,
Տեսնում է Սամէլ—
Մի մարդ ալեհեր
Կանգնած է, ահա, իր գլխավերել.
Հայեացքը քնքուշ, անշափ սիրալիր.
Ցալիս է քարել.
Ասում է նրան.

«Սամէ՛լ, դու քայլիք
«Դէպ Բիւրակ-Բինգեօլ ծաղկունաց լեռների
«Ուր վճիտ գետեր,
«Հազար-հազար աղ
«Ծոլում են եւ մեղք եւ կաթ սառնորակ...

Մի՛նչ լուռաշողով
թելթել, հողմադար
փարատեց երկրից խաւարը՝ զգոյշ,
խաւարի հետքով
Սաւերի ետքից փայլեց արշալոյսն—
Կարժիք, բոցավառ:

Ու զարթնեց Սամէլ լոյսի ծէգի հետ.
Ու բռնեց ծամբան—
Մի նեղ արահետ—
Զարքարոտ կածման...

Ու ահա իր դէմ Ծաղկունաց գրկում
Էրօտները՝ մոխ, փարթամ, սիզաւէտ—
Ուր պոյտ, անթառամ, շուշանն է ծաղկում,
Համեստ մանուշակ բուրքում է յաււտ:

Տեսաւ հովուհին—
Սարի լանջերին
Ոչխարների հօտ.
Նորածին կանչով զատները սիրուն
Մայրում ան անկուշտ, ստինքների մօտ...

Ու սրինգն, իսկոյն, հնչեց սրտագին
Նւագը զարնան, այնպէ՛ս սիրածայն,
Որ մարդ թէ գազան, յառած հովիկին,
Դայլայլների հետ իրար ծուլեցան:

«Եկէք ինձ մօտ, զառներ սիրուն,
«Դո՛ւք, ուլիկնե՛ր անհամար.
«Անցէք ծորով, մտէք առուն,
«Բերել եմ աղ ձեզ համար:

Եւ ոչխարներ, շարան-շարան,
Գերած սիրուն նւագից,
Կազմած անծայր մի կարաւան,
Անցան ծորի գետակից:

Ժայռերի մէջ, կածաններով,
Զարափներից մահագոյժ,
Թռան անվախ մեծ խմբերով,
Ոգի առած ու աշխոյժ:

Հասան շուտով Սամէլ կոյսին,
Սյն երգչունուն դիւթական.
Հանգիստ ու հեզ, Լուռ, միասին
Նրա չորս կողմ իմքեցան:

Ու կոյսն նորից
Նւագեց նուրբ, գուրգուրալից.

«Ծլէ՛ք գառներ,

«Իմ ուլիկներ.

«Ծրթանք մէկտեղ մի նոր երկիր,

«Մի նոր երկիր հղեմի.

«Իսկ դո՛ւ, սրի՜նգ, անուշ երգիր,

«Անցնենք ծամբան մենք դէմի:

Ժայռի տակին վճիռ աղբիւր
Հեզահամբոյր
Ժայթլում է դուքս սառնորակ...

Սառէլ Հովիկ
Շուերն հանեց համարծակ-

Ռտարոցիկ,
Ու հոլանի, հերարծակ—

Աղբիւրի մէջ, թըթռալով,
Ջրին տեց անուշ բոյր,
Ջուրը զգո՛յշ, փաղարջելով,
Կոյսից առաւ մի համբոյր:

Փարսած են ջինջ, մարմար կըծքին
Ջրի բիւրեղ կաթիլներ...

Ու ժողովիւնից ցայտում կրկին,
Խլում են նո՛ւ համբոյրներ:

Բիւզեօլ ակունքում նսկտար է բուրում.
Հովիւ ու անցորդ, թէ անյոյս հիւանդ
Բուժում են ընդ միշտ կենաց աղբիւրում,
Յաւերն էլ գետով հոսում են մարմանդ...

Ու կանչեց փէրին
Գառնուկ-ուլերին.

«Ելէ՛ք, շատով եղեմական
Եւ Բիւզեօլ ջրում լողացէք.
«Բիւզեօլ ջրում ամմահական—
«Նոր կեանք առէք, թարմացէք...

Եւ ոչխարներ ոտքի ելան
Սամէլ Հովկի նազից.
Թափւեցին ներս... ու դուրս ելան
Կենաց գուլալ ակունքից:

Սպիտակած—ծիւնի նման—
Եյն սեւաքուրդ ոչխարներ
Հագել են նուրբ, թաւշանման
Բուրդէ քնքուշ դիպակներ:

Երգում է կոյս Սամէլ Հովիկ,
Արար աշխարհն մինչ հիացած...

Ջեփիւններով դաւար հովիկ
Սարերից մեղմ իջնում է ցած:

Բինգեօլ լեռներ ծիծաղախիտ,
Վայրի շուշան, մանուշակ,
Զգաստութեան մայր Լնահիտ
Նայում են լուռ, անուշակ:

Լուսաշաղի հետ, հանդարտիկ, կամաց
 Գիշերն է երկրից լոկի փարատում.
 Եւ խօլ խաւարից, սարերի դիմաց,
 Մանկիկ արշալոյսն աղօտ եթերով
 Նրբին թելերով ցոլում է քնքոյշ,
 Գրկում է, քիշ-քիշ, խորունկ մթութիւն,
 Փայլումնք է տալիս հեզիկ ու զգոյշ,
 Վառում է, ապա, համայն բնութիւն:

Եւ հուր-բոցեղէն սուր-ճառագայթներ
 Երկնահաս Բինգեօլ սարի թիկունքից,
 Բանդած խաւարի մութ որոգայթներ,
 Թոշում են յաւէրժ հնոց-ակունքից:

Ու անխար հնոց ոսկեհեր արեւ
 Մազլցում է ժիր՝ Բինգեօլ սարն ի վեր.
 Տալիս է երկրին երկնային քարեւ,
 Սփռելով իր շուրջ շող-շող համբոյրներ:

Բացու՛մ է մութից շքնա՛ղ տեսարան,
Խանդակաթ սիրոյ մի հէքիւթ-կռնւմ,
Ուր հազար ծաղիկ, անհա՛հար քերան,
Զփփոտների հետ փարւած խնդաղէմ,
Կանչում են հեռից ժպիտ աշերով,
Նայում են անյազ՝ թերթերով կարօտ,
Ու իրար հիւսած անթիւ գոյներով,
Կազմում են մէկտեղ քնածին նարօտ:

Հովիկը ժողւեց փնջեր դաւարուն,
Փնջերից հիւսեց թագունու պսակ.
Ու գուգեց ինչպէս աննման զարուն:

Ո՛հ, սիրով լեցուն անաղարտ եթեր
Ենչում էր հոգուն այնպէս անուշիկ—
Ուղղում սրաթել սիրային նետեր...

Անձուկ էր Բիւրակ, մարում էր պապակ—
Սիրավառ Հովիկ.

Սիրտն էլ թրթռուն,
Ինչպէս որ արծւիկ,
Փակւած էր կրծքում...

Անա ալեծամն ու սեւին տալով,
Հեռու գագաթից, ուղիղ ծաշաւ դէմ,
Գալիս էր մի հօտ հովկին դէմ առ դէմ:

Թիկնաւէտ հովիւ—պարթեւ հութութիւ
Քայլում էր առոյգ՝ ոչխարների մօտ:

Աւ-վարդն էր, ասես, քացել իր թերթիկ,
Ասես թէ կոյսի նա եարն էր կարօտ—
Թէեւ անծանօթ...

Ու կախարդական հանդիպման ժամին
Դիտեց հութութիւ նորեկ չորանին,
Ու կարծես մէկից
Շեշտակի զարնւեց...
Կարծես թէ մէկից
Առ յաւէտ գերեց
Թովշական, վայրի, մեղուշ հայեացքից...

«Ասա դու ինձ, շե՛ս վախենում,
«Էյ միամիտ լեռնական,
«Ման ես զալիս այս եղեմում,
«Իմ աշխարհում սիրական:

«Դու շե՛ս լսել, որ կա հզօր—
«Բինգեօլի տէր—Նութութիկ,
«Շրջում է նա գիշեր ու զօր,
«Զեռքում բռնած պարսատիկ...

«Օձն իր պորտով, դուշն իր թելով,
«Ոչ էլ մի մարդ հողածին,
«Սիրտ չի արել իմ աշխարհով
«Գնալ-գտնել սիրածին...

—Լսի՛ր, անխելք վայրի շորան,
Դե՛լ, մեծամիտ Նութութիկ,
Բա՛ց է, ազա՛տ՝ սարի ճամբան,
Դրաւանդ դիր պարսատիկ:

Սամէլ Հովիկ մինչեւ այսօր
Զի սարսափել ոչ մէկից,
Երան է գալիս զիշեր ու զօր—
Առանց ընկեր սրտակից...

«Մի՛ քարկանա, Սամէլ Հովիկ,
«Էեզ հետ արի մի կատակ.
«Դու էլ ինձ պէս, սարի հովիկ,
«Դի՛ր մահակդ կոնատակ:

«Ծա էլ մենակ, առանց ընկեր,
«Պտտտում եմ միշտ մոլար,
«Սիրոս տխուր, սրտիս՝ վէրքեր,
«Տաղ եմ կանչում միալար:

«Էրի ուխտներ, հէ՛տց այս պահուն,
«Ընկեր լինենք անբաժան,
«Կեանքի փշոտ ճամբին՝ անհուն
«Սէրը լինի մեր նշան:

—Պարզ է հոգիդ, ով Հուլթուլթիկ,
Սիրտդ անկեղծ, չորանի.
Ամեն խօսքդ ոսկու հատիկ,
Մարդուն խելքից կը հանի:

Եւպենք ինչպէս սերտ, հարազատ
Երկու եղբայր, անխոռով.
Մեր տեղը մեծ, մենք էլ ազատ
Շրջենք այս լայն աշխարհով:

Ու խառնեցին հօտերն իրար,
Երկու հօտեր զանազան.
Վկա եղաւ երկիր արար
Նրանց ուխտին սրբազան:

Հովիկը հովւից կենսութեան, զւարթ.
Հովիւի հոգին՝ ինչպէս գարնան ցօղ.
Թշերը նրանց մի մի կարմիր վարդ,
Փայլուն աչերով, մեղմիւ ժպտացող,
Աղբիւրի ափին
Կանաչների մէջ, հացի նստեցին:

Ան միգանուշ—յաւերժահարսեր
Ատեն խմբերով մօտեցան Հովկին—
Պիթելու հովկին...
Դանդեցին վարսեր...
Խացին՝ մեղմիւ.

«Լսի՛ր, անմահ կին,

Քո սիրած տղան հանգիստ չտեսնի,
Մուրազը սրտում տանջւի սիրավառ.
Կտրի՞ճ է թէ ու՞ թող եարին հասնի.
Արծւի թեւերով ճանկէ իր աւար...

Հովիւը, արքած, ուզեց որ փարի,
Որ կրծքին սեղմի Սամէլ Հովիկին,
Ծարաւ շուրթերով նրան համբուրի...

Ո՛հ, ամառային

Խաբուսիկ սիրոյ տեսիլքների հետ
Աներեւութացան այն եթերային

հարսերը - անհետ:

«Սամէլ Հովիկ, երթամ մեր տուն —

«Վաղւա՛ն հացի մեզ համար.

«Իսկ դու հօտին հակիր արթուն.

«Զար գազաններ անհամար

«Երջում են մեր շրջակայքում,

«Ռոսի ելնոս՛ շա՛տ զգոյշ,

«Երբ աստղիկներ նոր-նոր ծագում,

«Պլպլում են նուրբ, քնքոյշ:

Գնաց Հուլիսիկ...

Ո, ինչո՞ւ, այն օր մոլորած աչքով
Ի՞նչ նա լոկկ—

Սարերի լանջով:

Ո, ինչո՞ւ, այնպէ՞ս իր սիրտն է լալիս,
Սինչ շուրջը սիրոյ քարել են տալիս...

Իկ մայրը, անժամ, երբ նրան տեսաւ,
Դարձաւ Հուլիսիկին ու տխուր ասաւ.

—Ախ ո՛ւր եկար, ազիզ քալաս,
Շա՞նը թողիք հօտի մօտ.

Մեր օրը սեւ... շուկ ու փալա՞ս

Մէրդ հագնի հիւրի մօտ.

Մ'իշտ ամաչի, թէ որ դուրս գա

Մէկ ջուր բերի ուզողին...

Այս ինչ գուլում կրակն ընկա,

Ա՛խ, ինչ հող տամ իմ գլխին:

«Հօտի համար, իմ առօրին մայր,
«Մի՛ մտածիր իզուր տեղ,
«Գառնուկ ու այծ քիւր, անհամար
«Խայտոտ մն ժիր, միատեղ:

«Նրանց մօտ է իմ նոր ընկեր
«Սամէլ Հովիկ՝ քաջ հովիւ.
«Ծաղիկ հասակ, սեւ-սեւ ունքեր,
«Զինար քոյով մի հովիւ:

«Ու նրա հօտն մեծ է իմսից.—
«Ինձ սլակասը՝ մէկ հազար.
«Երբ էլ ուզի բաժնել ինձնից,
«Պէտք է կիսենք հաւասար...

Երայրը ելաւ կրակ վառեց,
Իտը դեեց, որ հաւի.
Խոր թասի մէջ ձուն էլ հարեց,
Մեղրը, յետոյ, հիւթաւի
Զսեց հացին, եղձի հետ
Տեց որդուն, որ շուտով
Քոնի ժամբան, նոր արահետ
Ու չը մնա նա մութով:

Հովիւը կրկին արօտը դարձաւ,
Անհանգիստ սրտով գտաւ ընկերին:

Մեծ ժայռի կրծքում մթին քարանձաւ
Կա մինչեւ այսօր, այնտեղ հուր փէրին
Հանգիստ էր տուել վաստակած հօտին:

Վտակն էր ծորում վշշում անսպառ,
Տերեւներ ու թուփ փարում փսփսուկ,
Թիթեռներն, անհոգ, կազմած խաղ ու պար,
Կարճատեւ կեանքի վերջին մահասուգ...
Կարբաւում էին ծաղիկից ծաղիկ
Ու ծծու՛մ նրանց քոյրը թռնատոր:

Թիթեոնիկնե՛ք, մի՛ դանդաղիք,
Ձեր մահազանգն ահաւոր
Շուտ կը հնչի՝ կենսաթրթիւ
Բոյլ հոգեակներ մարելու,
Եւ լաց ու խինդ, կենաց խնդիւ
Մահւան հրով վառելու:

Ծծէ՛ք այս կեանքն անդառնալի,
Վայելեցէք ժամ առ ժամ,
Մինչ ձեր վերջին շողը փայլի,
Խաւար հնչի մահաժամ:

Իսկ դո՛ւք, հովիւ՛կ, այրւած սրտեր,
Լացէք, խամրէք սիրահար,
Ձեր տապ սիրուց քացւած վարդեր
Պէտք է թռչնին ցրտահար:

Էւ մի՛ իզուր խաբէք իրար,
Հօրի՛ք տանջւիք սրտաքեկ,
Ծաւ-ծաւ դիզւած սէրը վարար
Ձեր կրծքերից դուրս թափէք...

Եւ մինչ հովուին գաղտնապահ սիրով,
Մրմնջում էր ջերմ, ամբիժ շուրթերով...

Հովին էլ անգէտ... ըայց քամում էր լուռ
Անբացատրելի մի սիրոյ մոմուռ...

Դառնէր ու այծիկ նախշուն ծորերով,
Խորունկ ծորերով

Անցան մոլորուն—

Ճամբով ուրբուն:

Հովիկ ու հովիւ երբ ուշքի եկան,
Տեսան՝ սիրասուն գառները չկան:

Թռաւ Հովթուծիկ, իջաւ դէպի ցած,
Դառնուկ-ուլերին կանչեց բարկացած.

«Ո՛ւր էք կորել, է՞յ, անիրաւ

«Անասուններ դուք տխմար.

«Ինչքա՛ն վազեմ, հոգիս ելաւ,

«Հերիք տանջեմ ձեզ համար:

Սամէլ Հովիկ գթաց նրան,
Իր մօտ կանչեց Հովթուծկին.
Կանգնեց հսկա ժայռի վերան
Ու շունչ տուց սրնգին.

«Եկէ՛ք ինձ մօտ, հէ՛յ քալիկներ,
«Իմ գառնուկներ սիրասուն.
«Դո՛ւք էլ կայտառ իմ չալիկներ,
«Ձար ուլիկներ ծեռնասուն:

«Ես ծեզ համար երգ եմ ասում,
«Ընուշ երգեր ծեր սիրած.
«Լսէ՛ք դուք ինձ՝ գա՛յլ է վազում—
«Ատամները սուր սրած.
«Ման է գալիս նա օրերով,
«Հոտ է ատել ոչխարի,
«Պըտըտտում է սոված փորով
«Մուլթ ծորերը աշխարհի:

Ծւ ոչխարներ լեղապատառ
Դուրս թափւեցին ծորերից.
Ծրգի ծայնով ժիր, անդադար
Վեր ըարծրացան սարերից:

Արտասւեցին ժայռեր ու քար.
Հեծկլտում էր ամբողջ հօտ.
Վայրի ոչխար, սյծ, խնլազար
Թափւում էին հովկի մօտ:

Թառամուտ էր ալ-վարդ ծաղիկ.
Հովիւն անշէջ՝ սիրոյ հուր.
Իսկ դիցունին ամմահ Աստղիկ
Ժպտում էր լուռ, ոսկեհոտ:

Թողում են անվերջ ժամերը անհետ,
 Գիշեր ու ցերեկ շրջում գլխիվայր.
 Լուսինը, պայծառ աստղիկների հետ,
 Սարի կատարից դէպի զառիվայր
 Անդունդն է իջնում գիշերւա մթին,
 Որ առնի կարօտն իր քրոջ կրծքին...

Աւա՛ղ, մեզ անյայտ ու խորհրդաւոր
 Գերբնական մի ուժ, բնութեամբ անտես,
 Մղում է, նորից, հազիւ քախտաւոր
 Քոյրիկ-արեւին երկնային հանդէս:

Եւ միշտ քոյրագուրկ դալկահար լուսին,
 Արեւն էլ եղբօր անծիր կարօտով—
 Նայում են վերից մանկահաս կոյսին,
 Երբ սա պատանուն փարում է սիրով:

Եւ հովիւի դաշուկ, լուանկա հոգին
Քաշում է նոյնպէս սիրունու կարօտ...

Բայց ո՞վ է, ծարա՞ք, վատել Հուլթուլթկին...
Ըսանի՞ զիշերներ նա շրջի ետրոտ...

Ու այդպէս ետրոտ, նեւտահար, դժգոյն—
Մինչ տուն էր գալիս մի օր, մոլորած,
Որդու հոգսերով, մայրիկը ոգէտոյն
Հայրենի դռան շէմքին երեւաց:

«Վայ քո արեւին մատաղ լինիմ ես,
«Այդ ի՞նչ ես դառնել, իմ սիրուն ըստիկ,
«Հերիք է որքան, ո՞հ, սիրտս քամես,
«Խաւարով սլատես օրերս գալիք:

«Օ մի՛ հառաչիր այդպէս յուսահատ,
«Թոյլեքը միայն կասեն ու կուլան,
«Իսկ քեզ պէս կորիճ ամեն մի անհատ
«Ուժեղ սիրտ լինի, ինչպէս մի ասլան:

«Ամեն ցաւի դէմ կա դեղ ու դարման,
«Ամեն մի չարիք ծնում է քարիք...
«Դէ՛, բարձր պահի գլուխդ կեոման,
«Էլ որ քեզ չընկճի եւ ո՛չ մի կարիք:

«Ինձ համար միայն զարմանք է այսօր,
«Որ Սամէլ Հովիկ աղջիկ է շարմաղ...
«Նախախնամութեան ուժի դէմ, անգոր,
«Տկար շուրթերով ինչ ասեմ, աւաղ:

«Ես փլաւ կեփեմ՝ իողալի, անուշ.
«Հետն էլ կխաւնեմ մարգարիտ ու նուշ.
«Դու տար ու յանձնիր քո կոյս ընկերին.
«Թէ որ ուտելիս գովածդ փէրին
«Շուտ-շուտ հաւաքեց սիրուն մարգարիտ
«Ու պահել ուզեց աչերով ագան,—
«Գիտցիր, որ Սամէլ՝ աղջիկ է ճշրիտ,
«Թէ չէ՝ մտաւանջ իզուր մի՛ խոկա:

Փափուկ զեփիւո պտոյտ տալիս,
Շնչում է պաղ, անուրջով,
Եարի դարդից հօնգուր լալիս,
Վիս է հնչում մրմունջով:

Սօսափում են դաւար մայրիք
Տերեւախիտ վէս կատար:

«Զո գրոյցը, անգին մայրիկ,
«Մնացել է անկատար:

«Մէրը պատմիր այն ջիւանի,
«Որի հզօր ուքի տակ
«Ի՞նչ հսկաներ, քաջ, անւանի,
«Մոխիր դարձան անգիտակ:

Խօշտում են յո՛ւշ, հազար քերան,
Բիւր տերեւներ ոստերի,
Թեւերը բաց, մայրու վերան
Բո՞նել են սլար խմբական:

Դսկ ստուերում՝ կանարաք-զով,
Սամէլ Հովկին մօտ-մօտիկ,
Պատանեկան անհուն յոյզով,
Նստել էր հէզ Հութութիկ՝
Որ շուտ թափէր կոյսի առաջ
Յաւերժական ալ փնջեր,
Քամէր արցունք լաւահառաջ
Եւ փայփայած իր տենչեր:

«Այս ի՞նչ է, շորա՞ն, քո մայրը փնթի,
«Օ, նայիր ինչպէս փլաւ է եփել.
«Զէ՛՛ ես չեմ ուտի, իզուր մի՛ պնդի,
«Խնդրում եմ վերցուր, քանի չեմ թափել:

«Փլա՞ւ է եփել հապա, լա՞ւ նայիր.
«Տես ինչ մեծ քարեր, առագի կտոր...
«Ի՛նչ արի առողջ ատամներ պահիր,
«Որ այս քարերից չը լինին կտոր:

Ու խոռովկան Սամէլ Հովիկ
Շատ քարկացաւ սնամէջ,
Մարգարիտներն մէկիկ-մէկիկ
Նա շաղ տուց հողի մէջ:

Վայ, վայ, Հովթովթիկ, դու ի՞մ աննման
Գայլեր են սարից իջնում խմբերով.
Ազատի՛ր մեզ այս փորձանքից, ամենա՛ն,
Այ քո մութագին դու հասնես քարով:

Թռաւ տղան արագամազ.
Կոյսը՝ ժպտով լի, հարուստ—
Մարգարիտներ— քարեր աւազ
Ժողովեց քոլորն անկողնուտ:

...Չը կան գայլեր, ի գո՛ւր տանջանք.
Բայց հօտն ինչո՞ւ սարսափեց...

Հերիք թափէք արիւն ու ջանք,
Այն մի դեւ էր, որ խարեց:

Անցաւ դարձեալ մի նոր գիշեր,
Բացեց ժպտուն առաւօտ.
Երնէկ նրան, ով շունչ քաշէր—
Ծծէր թմրիւր ծաղկահոտ:

Հոգիդ-յակինթ քիւրեղի քար—
Զտում էր ի՞նչ անաղարտ.
Պոչում էիր.—ներքեւ մի զար,
Թափւիր սրտիս, հէզ սաղարթ՝
Ուզում եմ դեռ ապրել անմեռ,
Տենչալ գարուն հասակում,
Այն ցուլտ, դաժան ծերուկ ծմեռ
Իմ վալդենին չի զուգում...

Այդ առաւօտ հովին մոլոր,
Բայլահոլոր, վշտահար,
Տուն էր գնում ոլոր-լոլոր,
Տերեւաթափ, հողահար:

Յոյսի նշոյլ ալծ-ալծ ցուում,
Ցուում էր թոյլ, մերթ ընդ մերթ,
Հովին մարմնով քարակ ծորում,
Շտղ էր գալիս մահամերձ:

«Մայրի՜կ դու գիտուն, մայրի՜կ կաթոգիմ».

«Ախ ինչպէս խօսի լեզուս կարկամած».

«Զգիտեմ Սամէլ տղա է, թէ կին—

«Ուղեղս վաղուց ննջում է կամաց...

«Երեկ նա յուզեց յանց արծիւ քանտի,

«Թափեց մարգարիտ քարերի նման».

«Զե՛մ ուտում, տաւ, իզուր մի՛ պնդի,

«Քարոտ է փլաւ, կեղտոտ ձեր աման:

— Տեսա՞ր, սիրելիս, ես որ յեզ ասի—

«Ըն Սամէլ Հովիկ տղա է, չորան».

«Էլ մի՛ մոտածի, հօտին դու հասի».

«Իէ՛, հացը վեր առ ու բռնի ճամբան:

«Մայրի՜կ, ի՛մ մայրիկ, դժա՞ր է, դժւար,

«Զէ՛. Սամէլ Հովիկ փերի է, աղջիկ».

«Այսպէս է խօսում իմ սիրուն շիվար».

«Նա ինձ երազում տեց մի պաշիկ...

- Հանգիստ աչքիս լոյս, լսի՛ր ուշադիր,
Արցունքն ու կսկիծ զուր կն, աւելորդ-
Փոթորկւած հոգիդ զսպել աշխատիր,
Կանենք մենք այսօր մի փորձ էլ երկրորդ:

Վաւդերը լցնենք զոյգ-զոյգ ա՛մանում,
Փաթաթե՛մ մնտաքս, թաւիշ կտորով...
Ինչպէ՞ս, դու արդէն չա՛տես զարմանում,
Այո՛, կի՛մանանք մենք այս հըւարով...

Դու եւ Սա՛րէլը նստէք միասին
Թարմ-թարմ դարսըւած վարդերի վերա.
Էլ բաց չես թողնիլ կոյս աղջիկ հարսին,
Թէ շուտ թողմեցան վարդերը նրա:

Օ ե՛րբ Հովթուծիկ թասերն պիտ ըանա,
Որ Հովիկ կոյսի սիրով արքենա...

Սրտիկը այն օր խփում էր ուժգին,
Բերանում լնգու չը կար, որ խօսէր.
Աչերը յառած կոյսի հայեացքին —
Ինչպէ՛ս կուգենար, որ անուշ իտէր,
Բիրեղից յառակ արտառուցներով
Կաթիլ ու կաթիլ ընկնէր այտերին,
Սառնաթոր ցօղի անխղ պաշերով
Դիպէր հանդարտիկ թշի խայտերին:

Հէգ պատանու տանջանքներին
Ընկերունին անմասն չէր.
Նա էլ կուգէր իր ջիգեարին
Ահուր սեղմէր, պինդ պաշէր.
Ջարկէր սրտի նուրբ լարերին,
Մէկ էլ հնչէր ու հանգչէր...

Հոսում էր, ահ, մի ըոյր ծանօթ,—
Ձեղած վարդի աշխարհում.
Վարդը անհող, անջուր, անօդ
Հեծում էր վրէշ ու խամրում:

Խօսեց սրտիկն կոյս աղջկա,
Զգաց նա խուլ հառաչանք.

«Թառամեցինք... էլ ժար չկա,
«Ջեզ ենք ուղղում աղաչանք.
«Կուշ ենք եկել ամաններում,
«Մեզ պոկեցին սուր ծանկեր,
«Ծաղիկներիս, ոհ, չեն սիրում...
«Փորձում է քեզ քո ընկեր...

—Թո՛ղ Մարջան, կանչեց Սամէլ,
Բռնիր զայլին ի՜նչ բկից.
Մէկ խրատ տանք այս անգամ էլ,
Որ դուրս չը գա իր մտքից:

Անթարթով, նշանի հետ,
Հաւատարիմ կենդանին,
Արագ վազքով առաջ ու յետ,
Ուզեց բռնել գազանին:

Հովիւն էլ խենթ մի հայեացքի—
Քամու թեով սլացաւ,
Քաջի անուն թէ վաստակի.—

Գայլը, ափսո՛ս, փախաւ ծեռքից,
Շուտ չը հասաւ, որ բռնի...

Ձի՞ դիմանա... մրմուռ վէրքից
Նա վաղ թէ ուշ կը գժւի...

Դեռ անգիտակ, որ սրտակից
Ծարը եարին կը խաբի,
Թողմած վարդերն հէնց իր տակից
Ծարի թասում կը թափի...

Յկաւ տխուր. ու նա տեսաւ—
Հովկի վարդերն անթառամ:

—Անբաղդ գլխէս անօրն էջաւ,
Թողէք ճշամ, ես գոռամ,
Որ սեւ քոնի ամբողջ աշխարհ,
Խաւար դառնա եւ արեւ,

Մայի անվերջ հօտիս ոշխար,
Տան ինձ վերջին մէկ բարեւ...

Ես ո՛ւմ համար տանջիմ այսքան,
Ինչո՞ւ ապրիմ սիրայոյզ...
Բնի՛ր, աշուղ, դարդո՛ւտ որսկան,
Ննջի՛ր յաւէտ դու անյոյզ:

Փոքրիկ լճակ լեռնապատի
 Ականակոտ գազաթին,
 Լացող ուրիշ քարձրահասակ —
 Ճղնակոտոր իր շուրթին.
 Մթութեան մէջ խորհրդաւոր
 Աստղերի հոյւք, ծիր-կաթին
 Յուրս նմ ջինջ ու դարաւոր
 Համեստափայլ ճակատին:

Մ'ընչապատ փէս-գիշերին
 Բնաթաթախ աշերով,
 Մինչ անձնատուր իր յուշերին,
 Ալեծածան պաշերով
 Երազախափ լճակը լուռ
 Նիրհում է խոր արեւրում,
 Այն ժամանակ մի պառ սարսուռ
 Կոհակների ծափերում
 Եունչ է առնում գիշերածին,
 Չայնում է ջերմ սիրածին...

Մութի միջից, դանդաղաշարժ,
Պատկերացաւ մի ստուր.
Նա սեւաթոյր մահից, անշարժ,
Կախ էր գցել զոյգ թեւեր:

Սեւ էր քուրում նրա հագին.
Եւ գիշերից նա սեւակ.
Մո՛ւլթ էր առել մարդու հոգին.
Դաժան կեանքի խորթ զաւակ...

Կուտակ-կուտակ խոհեր, կսկիծ
Արմատ բռնած խորամուխ,
Թանջում էին ժայռոտ կրճից
Ամպագընաց թանձր մուխ:

Մեխուց ափին խորաթափանց,
Սոսկաց ջուրը մահակոչ.
Եւ ուռնիքն այն վեհապանծ
Մի ողբ ասին անագոչ.

«Կար մի ժամանակ, նրա այս լծակում
«Կարապետ էր հնչում իր նրզը ցնցուղ.
«Եւ մեր ծիւղերին սարեակը ծկում,
«Երբ ոստիկներին քացում էր ընծիւղ:

«Օ, այդ վնասշուք, ախորժ օրերին
«Ղուսնեակի շողքով իջած մեր հովին
«Մանկամարդ կանայք, ջրերի փէրին,
«Պար էին կազմում առոյգ, խմբովին:

«Եւ մենք քախտաւոր, ի՞նչ երանաւէտ
«Հով էինք սփռում նրանց երեսին.
«Աւա՛ղ, որ նրանք շուտ կորան յաւէտ,
«Մեզ քաժին տալով սլաւորանքները սին:

«Այն շուք, լուսաշաղ օրից մինչ այսօր
«Սուլում է միայն վայնասուն քամին.
«Իսկ մենք նրա դէմ յուսահատ, անզօր—
«Վայում ենք, լալիս գիշերա ժամին:

«Փախի՛ր դու շուտով, անգութ, անհոգի.
«Նոր-նոր յուշերով մեզ սի՛ վրդովիր.
«Անէ՛ծք քու ճամբին, նենգամիտ ոգի,
«Բոցավառ հրդեհ սիրով դու այրիր...

Ու պապակ ստուերն այն մութ գիշերին
ձշաց խեղագար-յուսահատ հոգով.
Ծուրազը սրտոս, լճի ափերին
Ծան էր որոնոս... սեռակ փէլու քով ..

Թախ-Թախկ, Թախ-Թախկ... լուսամուտին
Երախի մէջ սեւ, խօշական
Կէս գիշերւա Թանձր մութին—
Թակոս էր մի ուրական:

«Բա՞ց դուռը, մայրի՛կ, զաւակդ է կանչում.
«Գիշեր է պատել հոգիս անմեկին.
«Ոգիներն իմ շուրջ վիտտում են, Թանչում,
«Ուզում են խեղդել ինձ խաւար մէգին...

Ա՛հ, փոթորկեց վայրկենաբար
Միրող հոգին մայրական.
Պատռեց մութին իր ճանապարհն...
Գտաւ որդուն ուրական:

«Գրկի՛ր ինձ, ծնող, գրկի՛ր զաւակիդ.
«Շունչ տուր կենսատու, մի ջունչ, մի կրակ,
«Որ կենդանանամ մայրական կրօքիդ,
«Ուռճանամ ուժով, ջերմանամ արագ:

«Երկինքը պայծեց իմ գլխուս վերեւ,
«Խաւարը հոսեց իր ցուրտ ամպերով,
«Յաւիտեան մթնեց վառ կեանքիս արեւ,
«Շշնջաց աղօտ մի վերջին քարով:

«Վարդերը թօշնան միայն իմ թասում.
«Դալով, դեղնահար ժպտացին նրանք.—
«Անմիտ պատանի, ի՞նչ ես սպասում...
«Դադտնի, հրատապ ջերմ սիրուց խամբանք

«Աչերս պատեց խելառ մառախուղ,
«Մշուշը փաթթեց իմ միտքը պայծառ.
«Կրօնքումս բացեց խորովի հրաքուխ,
«Մահի տենչերով մարեցա անծայր...

«Եւ ան սոսկալի մի խելառ վայրկեան...
«Ես քեզ յիշեցի, ո՛հ, անգին մայրիկ.
«Գիտե՞ս թէ քեզի սիրում եմ որքա՞ն,
«Դու կեանքիս հատոր, մայրիկ իմ քաղցրիկ:

—Հանգչի՛ր, աչերի սիրասուն ի՛մ լոյս,
Ծերութեան միակ ապաւէն ու յոյս.

Դու չես բոլորել դեռ քսան գարուն,
Ծաղիկ հասակիդ վարդերն են փթթում,

Զո երակներում վազում է արիւն,
Կենսուրախ կեանքիդ արեւն է խնդում.
Նոր-նոր քաց արած թուերը շող-շող
Հրապոյր քաղցրութեամբ սէր է ցուցուում.
Իսկ դու անձնատուր խոհերիդ մաշող,
Մեղրահոս կեանքի հիւթերն ես ծորում:

Դիտեմ ես քանի՞ զեղաշեա կոյսեր,
Լուսնեակից չքնաղ, արեւից ժպտուն,
Երկնքից իջած հըրեղէն լոյսեր,
Աշխարհ-եղեմի շինար հաստատուն,
Մազերը փռած փունջ-փունջ հիւսերով,
Շամաւ ծծերի կուրծքերը հալարտ,
Չեղբերդ հասնեն նրանց ուսերով,
Ունքերը խաս-խաս աըրէշում բարդ-բարդ,
Մատները ծիւնէ, մարմինը մարմար,
Թշերը վարդի կոկոններ անբաց,—
Նրանք խելազար այրումքեզ համար,
Քո ջահէլ-ջիվան տեսքով են արքած:

Ջրկենք նրանցից մէկին հարսնացու,
Կապենք վզերիդ սլտակի նարօտ...
Իմ էլ վշտացած կեանքս քաղցրացու,
Անեմ ես սիրուա անսպառ կարօտ:

«Զէ՛, շէ՛, մայրի՛կ չան, այդպէս մի՛ խօսիր,
«Առանց Հովիկի ապրել չեմ կարող.
«Թէ ինձ սիրում ես՝ օգնութեան հասիր,
• Փակիր խորխորատ վիրը խանգարող,
• Մօտեցուր իմար սրտերը ջահիւ,
• Պատոհի՛ր Սամէլից քօղը մշուշի,
• Որ մարդ թէ գազան մեզ մասն մայիւ
• Եւ ամբողջ աշխարհ մեր սէրը յիշի:

• Նրա փոթորկող ժպիտն անուշիկ
• Մեխել է հոգուս ծաւրերով, ուժգին.
• Նա իմ դիցունին, իմ կեանքն է նուշիկ,
• Գերի եմ նրա մտքին եւ ուշքին:

«Յիշում եմ... այն օր դարձա նրա մօտ,
 «Հողանում էր նա ջրվեժի տակին.
 «Հէնց որ ինձ տեսաւ՝ զգաց մի ամօթ.
 «Դուրս թռաւ ջրից... շորերը հագին
 «Իմ դէմս ելաւ, քայց որ տեսնէիր,
 «Թեւեքէ կգնար, չուտել—չը խմել,
 «Նրան օրերով նայել կուգէիր,
 «Թէ որ աղջիկ է՝ մարմինը քամել
 «Ծոր-ծոր հալուօքով քո կրօքի վրա,
 «Շունչ տալ, շունչ առնել կոյսի երակից,
 «Ծծել եւ հրաաւոյր եւ թովչանք նրա,
 «Ապա թէ խանձել արեւ-կրակից...

— Լսի՛ր, Հովթութիկ, այդ ի՞նչ ես ասում,
Հովիկը փախա՞ւ ջրվէժի տակից...
Թողորմս մի նոր կասկած է վազում.
Ահ ի՞նչ կասի մայրդ սրտակից.

Զէ՛, Հովիկը հէ՛նց՝ աղջիկ է որ կա,
Թէ ոչ՝ ընկերից նա շէր ամաչի.
Յթէ սուտ լինի, հոգիս է վկա,
Թող մեր պարտէզը էլ չը կանաչի:

Այժմ դու զգոյշ եղի՛ր հետամուտ,
Որ կոյսը քնաւ քեզ չը նկատի.
Երբ լոյս երևկոն հագնի շղարշ մութ,
Մշուշը մեղմիկ սար ու ձոր պատի,
Հովիկը քեզնից հեռանա թագուն,
Ջրվէժը առնի արծաթէ ուսով,—
Անշուք, անծայն հետեւի՛ր իսկոյն,
Այնտեղ կը մնաք միայն երկուսով...

Կը ցայտի փրփուր ջրվեժի վշտոց,
Վտակը կերթա զւարթ, կարկաշուն,
Քամուց կը հնչի անտառի խշշոց,
Աստղերն կը նայեն երկնից՝ պառպաշուն.

Աղջիկը, հոգով ծուլւած բուրբին,
Ասահով կը զգա վեհ, խորհրդաւոր
Բնութեան գրկոսէ լոին գիշերին,—
Ինչպէս ջրերի հուրի մենաւոր:

Անճնատուր եղած մերկանդամ մարմնով
Պաշող խաղերին, խլող կուտութիւն,
Նրանց գուգորդւած իր տաք արիւնով.
Յոյսը կը վանի ճնշող հեզութիւն —

Ազատ ծփալու վայրի շիթերով,
Կարօտը առնի այրող արքունքի,
Պաշերը տեղան նրա այտերով,
Զուգեն եւ վարդերն վառող զարունքի.

Կուրծքը—գոյգ խնձոր—հասնելու մօտիկ,
Դէմ տա համարձակ ջրվէժ-հաքւածին.
Թրթռան վէտ-վէտ մարմին ու տոտիկ...
Եւ նա զմայլած ծիծղա զաղտնածին.—

Հասի՛ր եղնիկի թեթեւ ոստիւնով,
Շորերը խլիր աւազոտ ափից
Եւ քաղուկների առողջ թնդիւնով
Սեղմիր քո կրծքին Հովիկին ամբիծ:

Ինչպէս երկնքից սլացող ուրուն
Ճանկում է որսը՝ գիշատիչ ազան—
Պաշերը մեխիր կոյսի շուրթերուն,
Թող որ նա մի սկան ծչա ու սգա,
Եւս սիրասուն զառան հեզութեամբ
Քնքուշ կը նայի կրակ աչերիդ,
Ուժաթափ եղած, ծորող քաղցրութեամբ
Արծազանք կը տա մեղրոտ սաշերիդ:

Բո սէրը այնժամ շշնջա նրան.
Հուրը քորքոքիւ կուսական սրտում.
Բաղիւ շուրթերի հրապոյրն անսահման
Եւ մինչ գերեզման սիրելու խոստում:

Վերցնում ջինջ-եթեր կապուտակ.
 Ներքցնում ծառ ու թուփ խշխշուն.
 Ու նախշուն ջրերով սառ վտակ
 Կը վազէ երազուն մշուշում:

Անուշիկ կերպէ եւ լուսին,
 Օրօրուն կը վազէ դարերով.
 Եւ լուսին ու աստղեր միասին
 Կը ցուան կաթնագոյն շողերով:

Շողշողուն հովտահին այդ գիշեր,
 Լուսնեակից անլի դալկահար,
 Անցեալի յուշերով կը շրջէր...
 Կը դողար եւ հոգին սիրահար:

Դադունապահ-մորմոքուն իր հոգով
 Կը քալէր մենասօր ամերին...
 Ու հասուն կուսական արքունքով
 Հեկեկաց սարերի հուր-փերին.—

«Թօշնեցան կեանքիս
«Շուշան ու սմբուլ.
«Պատեցին հոգիս
«Կսկիծ ու մրմուռ:

«Մարեց խանդակաթ
«Վառ-սիրոյ զարուհ.
«Սրտիկս կաթ-կաթ
«Փորոս է արիւն:

«Իմ կիրքն անարատ,
«Երկնքից լազուր,
«Ա՛խ, ինչո՞ւ առատ
«Բորբորեց իզուր:

«Զեզմո՛վ տարեցա,
«Հովի՛ւ, ա՛յ անգութ...

«Զեզմով մոռացա
«Աշխարհն իմ մանկուտ...

Ստանբախիտ կաղնու տակ հով
Ծնկշնկում էր սլաղ քամին.
Օրւա տօթին, ամուշ նիրհով,
Հանգչում էր հէգ սլատամին:

Փէրինները կազմած շրջան,
Եթերային երազում,—

«Ննջի՛ր խաղաղ, Հովթուծիկ ջան» —

Հովհարում են ու ասում.

«Այսօր, անշուշտ, դու կտնանես

«Բացւած կուրծքը քո ետքի.

«Ծարիդ կրքով պինդ կը սեղմես,

«Նա էլ քեզ հետ կը մարի...

Ծնկշնկում էր զեփիւռ քամին,

Ծնչում էր զով, ամուշ հով,

Երազներում հէգ սլատամին

Մրմնջում էր խոր նիրհով:

Սարի լանջերով օրւա այդ պահուն
Քայլում էր դանդաղ մի չքնաղ աղջիկ:

Բարձրանում էր նա... վշտահար, խոհուն
Թողում էին յետ մրմուռ զոյգ աշիկ...

Փնտռում սիրելուն... մոլոր, անուղի.
Թշա՛ռ հովիւի անուշ երազին:

Սիրտն է թրթռում դարդոտ աշուղի.—
Այսօր կը հասնի կարօտ մուրազին...

Բայց ո՞վ է փախչում սարն ի վեր, անհաս.
Այն ի՞նչ ծայներ են հնչում ահանջին:
Կանչում են կարծես. «Դէ՛, բարո՞վ մնաս»...
Այն ո՞ւմ են տալիս համբոյրներ վերջին...

«Զեզ վերջի՞ն հրաժեշտ, Բինգեօլ սարեր ջա՛ն,
«Սիրավառ կեանքիս անմոռաց որրան.
«Քանի՛ տարիներ, քանի՛ սէզ զարուն,
«Շնչել եմ անյագ՝ լանջերիդ սիրուն:

«Կանաչ ու ծաղիկ, դուք մնաք քարով,
«Ես շա՛տ արքեցա ծեր անուշ քոյրով...

«Եւ դո՛ւ, մենաւոր կուսական անտառ.—
«Օ քեզ տեսնելիս՝ սի՛րտս կը թնդար:

«Ժայռե՛ր ու քարափ, ամօհի սել ծոր,
«Դո՛ւք էլ թնդացիք երգով սիրածոր:

«Գետա՛կ կարկաչուն, դու փրփուր ջրվէ՛ծ,
«Թափեցաք հագուս ծայներով վիշ-վէշ...

Լոնց գետակ, կանգնեց ջրվէժ—
Չի փրփրում զահավէժ.
Սիրանւէր Բինգեօւ-Շնէմ
Էւ չի ժպտում խնդադէմ:

Հսկայական կանաչ անտառ,
Մերկանալով դեղնահար,
Չայր խոնարհեց արիւնակաթ
Սօսիների վէս զազաթ:

Քար են կտրել, մինչեւ հիմի,
Գազանները ամենի.
Քար աչերից արտասուքի
Շիթ է ցայտում կրկնակի:

Ու մղկտա՛ց աղէկտուր
Հօտը, ամալից սեւաթոյր.
Հովկի սիրուն գուրգուրալով
Չորը թափւեց սուրալով:

Միայն... հովիւ խորունկ ննջում,
Մրմնջում էր անուրջում.
Իր սիրունին ժպտուն աչով
Անց էր կենում առաջով...

«Եւ դո՛ւ, հուծուծիկ, ահ, բարո՛ւ մնաս...
«Գաղտնիքն իմ հոգու այժմ կիմանաս. —

«Ծնող ու քոյրեր մոռցա քո սիրուն,
«Քեզ հետ անցուցի եօթ սիրոյ զարուն:

«Մոռացա նամուս հասած աղջկա...
«Խղճիս խայթի դէմ դարձա անզգա:

«Ուզեցի շնչեմ քո կրծքի հրով...
«Անզո՛ւթ սիրական, դէ, մնաս բարով...

«Ինչպէս է՛լ ապրեմ քեզ հետ անբաժան,
«Սէրս շիմացար, մանո՛ւկ անարժան:

«Լսո՞ւմ էք, ջրե՛ր, կացէ՛ք, մի՛ փախչիք.
«Ասէք չորանի՞ն՝ տղա եմ — աղջիկ...

Լճակի ծոցում կարա՛ւ լողացող,
Պատմիր աղջկա սիրտը միացող:

«Ջրվէժ դու վայրի, պաշող անհոգի,
«Խօսիր եւ կրքերն այրող արքունքի...

«Փո՛ւլ եկ վիթխարի Սերմանց դու կատար,
«Խեղդիր անխնա իմ ուխտն անկատար...

«Այժմ ես կերթամ, կերթամ լալագին,
«Թողնելով այստեղ իմ եարօտ հոգին...

«Եւ դու... Հուժուժի՛կ... առար իմ անդորր-
«Էեզ վերջին քարով... կեանքիս դու հատոր:

Հովւի գլխին, ասես, յանկարծ
Պայթեց ինչ որ մի թնդին...
Նա, շանթահար, էլ ո՛ւր անդարծ
Կոյսին ման գար—ապարդին:

—Հէ՛յ, թո՛յլ որսկան, կաց ամօթով...
Մարին փախաւ քո ճեղքից:

«Անսի՛րտ բազէ, ճանկի՛ր շուտով,
«Վայր բեր որսը երկնքից:

—Ձե՛, Հէ՛ ջիվան, զուր մի՛ փնտոիր,
Մարին փախաւ սարից ցած.
Քաջ ես — սարի կուրծքը պատոիր,
Ճանկիր որսդ հեռացած:

«Անգո՛ւթ սարեր, քաշւէք հեռու,—
«Երթաւ, հասնեմ իմ եարին...

—Անտառի մէջ, խմար ուրու,
Էլ չե՛ս գտնիլ քո եարին:

Պայթեց ամպրոպ. լսեց յանկարծ
Արհաւրաւից նոր թնդին.

«Ի՞նչ ես, չորա՛ն, անվերադարձ
«Աղջիկ փնտոում—ապարդին...

Վ. Ե Ր Զ Ե Ր Գ Ա Ն Բ .

Դառնաշունչ, յոռի տարիներ անցան,
Երկար տարիներ սեւաթոյր կեանքի.
Եւ դառն օրերի ինչպէս յուշարժան—
Սուերն է շրջում անլուր զրկանքի:

Նրա որոնող աշերից մահու
Անէ՛ծք է թափւում ծանրութեամբ կապար.
Անէ՛ծքների հետ սուլում են վա-հո՛ւ,
Անհոգ քամիներ ճայնով ծաղրաբար:

Հողմավար սուեր հոգին խելագար
Վազում է մութին, քամուց էլ թեթեւ.
Նա պատրանքների սին մտքով—տկար—
Ճանկել է ուզում իր որսը անթեւ:

Ահա... խամոզավառ, նա զոյգ բազումով
դէտք է տիրանա նազելուն անմահ.
Բայց... աներեւոյթ լոյսի թոհէրով
Ցնդոս է փէրին... այդպէս մինչ հիմա:

Եւ անգոր հոգին, քամուց շրջուիկ,
Գաղտնի մննաւոր վայրերն է դիմում.
Անգութ աւայքարում եղած դասաւիթ—
Լեռնացած վշտի Դրուրն է քամում:

Նրան տեսնելիս սարերն որբացած
Կզովք են կարդում անգութ, թունաւիթ...

— Ա՛խ, չքնաղ փէրին, ինչո՞ւ, անիծա՞ծ,
Այն հնչուն տարին փախաւ մեզանից:

Ողբում է մայրին ծանր տնքոցով.

Ամպեր են հոսում թուղալ-թուղալ միմազգած

«Անտառը միայն միշտ լաց ու կոծով

«Սիրուն աղջկա կորուստը սղաց:

Լալիս են, գոչում ծաղկունք լալազալ:

Քարերն են հոսում արցունքի հեղուկ...

«Գնա՛ց կոյս Սամէլ, օ անէծք հազար...

«Դժոխքն է քամել մեր ցար ահեղ:

Գետակն էլ նորից կանչում է՝ «վիշ-վիշ...»

«Կորաւ սիրունիս-շնաշխարհիկ կոյս...

«Ընկի՛ր քարափից անդունդ գահավէժ,

«Ատելի դու մարդ վշտահար հոգոյս:

Սուլում է քամին շաքախինդ վա-հո՛ւ...
 Հնչում ախանջին անհոգ, ծաղրաբար.
 Եւ հոգու պղտոր աչերից մահու
 Անէ՛ծք է թափում ծանրութեամբ կապար:

Օ դո՛ւք, խաբուսիկ տեսիլք աչերի,
 Անարկու կեանքի յիշատակ նոր-նոր...
 Անպատում վշտի երգը սոսկալի
 Հնչէք մնարին վերջին ամանուր:

Գրած
 1911 թ.
 ԹԻՓԼԻՍ

Վերամշակած
 1916 թ.
 Սարիղամիշ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Տիտան	7
Արծւի ինչոյքը	35
Գողգոթա	53
Գարնանային հովեր	69
Սամէլ Հովիկ	115



(Р. II.) 1303. Москва. Тир. 1000 экз.

Типограф. ДКСА, Армянский, 2.

